




GEOTEAM

Ամուլսարի ոսկու հանքի ծրագիր  
Համայնքային զարգացման պլան (ՀԶՊ)


Թարմացված S2.0  
հունիս 2016

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

<b>1</b>	<b>ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԼԱՆԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ .....</b>	<b>1</b>
<b>2</b>	<b>ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ .....</b>	<b>4</b>
2.1	ՈՒՂԵՑՈՒՅՑՆԵՐ ԵՎ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ .....	4
2.1.1	Համաշխարհային բանկի խումբ՝ Միջազգային ֆինանսական կորպորացիա .....	5
2.1.2	Հանքարդյունաբերության և մետաղների միջազգային խորհուրդ (ՀՄՄԽ) .....	6
2.2	ԱԶԳԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ .....	6
2.3	ԼԻԴԻԱՆԻ ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԿԱՆՈՆԱԳԻՐՔԸ .....	7
2.3.1	Սոցիալական քաղաքականություն .....	7
<b>3</b>	<b>ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԼԱՆԻ ՄԿԶԲՈՒՆՔՆԵՐ .....</b>	<b>8</b>
<b>4</b>	<b>ՄԻՆՉ ՕՐՍ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ .....</b>	<b>10</b>
4.1	ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ .....	10
4.2	ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ 2007-15 .....	12
4.3	ԳՈՐԱՅՔ .....	12
4.4	ՍԱՐԱՎԱՆ ԳՅՈՒՂ (ՍԱՐԱՎԱՆ, ՍԱՐԱԼԱՆՋ ԵՎ ՈՒՂԵՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԸ ՆԵՐԱՌՅԱԼ) .....	14
4.5	ԳՆԴԵՎԱԶ .....	15
4.6	ԶԵՐՄՈՒԿ ԵՎ ԿԵՉՈՒՏ .....	17
4.7	ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԿԱՄԱՎՈՐ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ .....	19
4.8	ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ .....	20
<b>5</b>	<b>ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԼԱՆ .....</b>	<b>22</b>
5.1	ԱԶԴԵՑՈՒՄՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԱՄԲ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ .....	23
5.2	ՇԱՀԱՌՈՒՆԵՐ .....	25
5.3	ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՄԱՇՄԱՆՈՒՄ .....	26
5.4	ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ .....	30
5.4.1	Արտաքին կազմակերպությունների հետ համագործակցում .....	31
5.4.2	Շահառուները որպես զարգացման գործընկերներ .....	32
5.5	ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԹԻՐԱԽԱՅԻՆ ՈԼՈՐՏՆԵՐ .....	34
5.5.1	Գյուղական ենթակառուցվածքների բարելավում .....	37
5.5.2	Տեղում առկա հնարավորությունների ընդլայնում .....	38

 <b>GEOTEAM</b>	<b>Համայնքային զարգացման պլան</b>	<b>հունիս 2016</b>
-----------------------------------------------------------------------------------------------------	-----------------------------------	--------------------

5.5.3	Տնտեսական զարգացում .....	39
5.5.4	Կրթություն & Առաջնային առողջապահություն .....	40
5.5.5	Մշտադիտարկում և գնահատում .....	41
5.6	ՄԱՐԴԿԱՅԻՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ.....	42
5.6.1	Մարդկային ռեսուրսներ.....	42
6	<b>ՀԱԶՈՐԴՈՂ ՔԱՅԼԵՐԸ .....</b>	<b>43</b>


 <b>GEOTEAM</b>	<b>Համայնքային զարգացման պլան</b>	<b>հունիս 2016</b>
-----------------------------------------------------------------------------------------------------	-----------------------------------	--------------------


## **ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐ**

Աղյուսակ 5.1. Կոնկրետ ենթակառուցվածքների և զարգացման առաջնահերթություններ, որոնք սահմանվել են 2009-2016թթ. ուսումնասիրությունների արդյունքում .....27

## **ՆԿԱՐ**

Նկար 1. Համայնքային զարգացման ծրագրեր իրականացնող թիմի օրգանոգրամա 42

 <p>GEOTEAM</p>	<p><b>Համայնքային զարգացման պլան</b></p>	<p><b>հունիս 2016</b></p>
--------------------------------------------------------------------------------------------------	------------------------------------------	---------------------------

 <b>GEOTEAM</b>	<b>Համայնքային զարգացման պլան</b>	<b>հունիս 2016</b>
-----------------------------------------------------------------------------------------------------	-----------------------------------	--------------------


# 1 ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԼԱՆԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Lydian International Ltd ընկերությունը (այսուհետ՝ Լիդիան) և նրան ամբողջովին պատկանող «Գեոթիմ» ՓԲԸ Հայաստանյան դուստր ընկերությունը (այսուհետ՝ Գեոթիմը) Հայաստանի Հանրապետության (ՀՀ) կենտրոնական մասում իրականացնում են Ամուլսարի ոսկու հանքի ծրագիր (այսուհետ՝ Ծրագիր), որը ենթադրում է բաց եղանակով ոսկու արդյունահանում և ցիանիդի լուծույթով կույտային տարրավազման եղանակով վերամշակում:

Lydian International Ltd ընկերության (այսուհետ՝ Լիդիան)<sup>1</sup> կողմից Բնապահպանական ու սոցիալական ազդեցությունների գնահատման (ԲՍԱԳ) շրջանակներում մշակվել է սույն Համայնքային զարգացման պլանը (ՀԶՊ)<sup>2</sup> Հայաստանի Հանրապետության կենտրոնական մասում Ամուլսարի ոսկու հանքի շահագործման նպատակով:

Միջազգային ֆինանսական կորպորացիայի (ՄՖԿ)-ի համաձայն, «համայնքային զարգացման ծրագրեր են համարվում այնպիսի ծրագրերը, որոնք խթանում են որևէ ընկերության կողմից իրականացվող ծրագրերի սահմաններում ազդակիր բնակչության կայուն տնտեսական զարգացումը, շրջակա միջավայրի պաշտպանությունը, կրթությունը, հմտությունների ձևավորումը, առողջապահությունն ու բարեկեցությունը»<sup>1</sup>:

Սույն փաստաթուղթն արտացոլում է համայնքային զարգացման հետ կապված Լիդիանի պարտավորություններն ու դրանց իրականացման ուղիները: ՀԶՊ-ը հանդիսանում է ԲՍԱԳ-ով սահմանված պարտավորությունների կատարման նպատակով մշակված կառավարման պլաններից մեկը, որն առաջարկում է Ծրագրի ազդակիր համայնքների աջակցմանն ուղղված երկարաժամկետ նախաձեռնություններ: Համայնքային զարգացման ծրագրերի նպատակն է պահպանել հանքի շահագործման համար անհրաժեշտ սոցիալական լիցենզիան: Ընկերությունը պարտավորվում է գործել որպես պատասխանատու հանքարդյունաբերական ընկերություն՝ ապահովելով հիմնական գործընթացների համար որակի կառավարում, այդ թվում՝ օգտակար հանածոների արդյունահանման ընթացքում շրջակա միջավայրի պահպանություն,


 GEOTEAM	<b>Համայնքային զարգացման պլան</b>	<b>հունիս 2016</b>
----------------------------------------------------------------------------------------------	-----------------------------------	--------------------

աշխատողների պաշտպանություն և համայնքների առողջության ու անվտանգության ապահովում, աշխատանքի ու ուսուցման հավասար պայմանների ստեղծում, ամեն տեսակի եկամուտների (այդ թվում՝ հարկերի, ռոյալթիների և համայնքային հողերի վարձավճարների ու այլնի) պատշաճ ու թափանցիկ վճարում:

2007-2011 թթ. Ընկերության կողմից սոցիալական պարտավորությունների շրջանակում իրականացվել են գյուղական ենթակառուցվածքների և համայնքային զարգացման կամավոր ծրագրեր: Սակայն 2012 թ. սկսած Ընկերությունը փորձում է տարանջատել գյուղական ենթակառուցվածքների ու համայնքային զարգացման *կամավոր* և Ծրագրի իրականացմամբ պայմանավորված բացասական հետևանքների կրճատմանն ուղղված *պարտադիր* ծրագրերը: Պարտադիր մեղմացման միջոցառումները ավելի մանրամասնորեն ներկայացված են Ծրագրի ԲՄԱԳ-ում:

Լիդիանի կողմից մշակվել է «Ամուլսարի սոցիալական ռազմավարություն 2012-2014»-ը, որը ներառում է ռազմավարական մոտեցումներ և համայնքային զարգացման չափորշիչներ պարունակող տարեկան գործողությունների պլան և սահմանում գնահատման արդյունքում ընտրված միջամտության լայն ոլորտներ: Լիդիանի կողմից գործընկերությունը դիտարկվում է որպես համայնքային զարգացման ապահովման հիմնական միջոց:

2015թ. վերջին մշակվել է նոր Սոցիալական ներդրումների ռազմավարություն, որը համառոտ ներկայացնում է նախորդ Սոցիալական ռազմավարություններով սահմանված սոցիալական ներդրումների վերաբերյալ մոտեցումները: Այն հանդիսանում է Լիդիանի խորհրդի կողմից 2016թ. հունվարին հաստատված ներքին փաստաթուղթ: Նոր Սոցիալական ներդրումների ռազմավարությունը չի անդրադառնում ավելի լայն սոցիալական կառավարման հարցերին, մասնավորապես կենսամիջոցների վերականգնմանը, աշխատողների վերապատրաստմանը կամ թափանցիկության ու կառավարման հարցերին, որոնք արտացոլված են այլ փաստաթղթերում, ինչպես նաև այն չի ներառում հանրային կապերի նպատակով իրականացված ներդրումները:

 <b>GEOTEAM</b>	<b>Համայնքային զարգացման պլան</b>	<b>հունիս 2016</b>
-----------------------------------------------------------------------------------------------------	-----------------------------------	--------------------


Լիդիանի սոցիալական ներդրումների ռազմավարությունը մշակվել է ընկերության քաղաքականությանը, ՄՖԿ/ՎՋԵԲ-ի պահանջներին և միջազգային լավագույն չափանիշներին համապատասխան:

ՀԶՊ-ը արտացոլում է Սոցիալական ռազմավարությամբ որդեգրված սկզբունքներն ու կառուցված է դրանց հիման վրա, այն սահմանում է նաև Ընկերության կողմից համայնքային զարգացման եղանակները:

2014թ. վերջում արդյունահանման իրավունքի ստացումն ապահովեց Ամուլսարի անցումը հետախուզական գործողություններից ու ծրագրի մշակումից դեպի հանքի շինարարության փուլ: Կորպորատիվ սոցիալական պատասխանատվության և սոցիալական զարգացման տեսանկյունից շատ կարևոր է պահպանել նախորդ տարիների ընթացքում ապահովված զարգացման ծրագրերի տեմպերը՝ մինչև ժամանակ կենտրոնանալով նույն ոլորտում ընկերության երկարաժամկետ հեռանկարների վրա: 2016թ. և դրանից հետո ակնկալվող ներգրավման ոլորտները շատ չեն տարբերվի 2015թ. ռազմավարությամբ սահմանվածներից (երկարաժամկետ տնտեսական զարգացում, հմտությունների ձևավորում, տեղական մակարդակով հնարավորությունների ստեղծում, փոքր/միջին բիզնեսի զարգացում, տեղական շուկաների և ծառայությունների զարգացում և այլն): Մինչև ժամանակ, վերոնշյալ ոլորտներում առկա մոտեցումները նախատեսվում է վերանայել Ծրագրի հիմնական ռիսկերի կողմնորոշման նպատակով՝ ներառելով ազդակիր ոլորտում երկարաժամկետ զարգացում ապահովող հիմնական տարրեր ու ուղղություններ: Վերոնշյալ մոտեցումները կներառեն օրինակ թիրախային համայնքների կողմից ացելացող ներդրումներ, բնակչության որոշ խմբերի թիրախավորում, զարգացման վերականգնվող մոդելների սահմանում, մասնավոր և հանրային հատվածների համագործակցություն, տարբեր խմբերի համար համագործակցության կամ ծախսերում մասնակցության մեխանիզմների սահմանում:

2015թ. կեսերին նախաձեռնվել է Ծրագրի արժեքի և նախագծի օպտիմալացման գործընթաց, որի շրջանակներում Samuel Engineering Inc. ընկերությանը (այսուհետ՝ Samuel) և այլ խորհրդատուներին հանձնարարվել է կատարել գնահատման ու նախագծման աշխատանքներ ընտրված որոշ օպտիմալացված



 <b>GEOTEAM</b>	<b>Համայնքային զարգացման պլան</b>	<b>հունիս 2016</b>
-----------------------------------------------------------------------------------------------------	-----------------------------------	--------------------

տարբերակներով: Նպատական էր՝ կրճատել կապիտալ ծախսերը՝ չավելացնելով շահագործման ծախսերը կամ բնապահպանական ու սոցիալական ազդեցությունները: 2015թ. իրականացված աշխատանքների արդյունքները, որոնք հրապարակվել են 2015թ. նոյեմբերին «43-101 Տեխնիկական զեկույց. Ամուլսար ծրագրի նախագծի և ծախսերի օպտիմալացում, Հայաստան» Ազգային Գործիքում, ենթադրում են կապիտալ և շահագործման ծախսերի կրճատում՝ դարձնելով Ծրագիրն էլ ավելի կենսունակ առկա բարդ տնտեսական պայմաններում:


Նախագծի և ծախսերի օպտիմալացման արդյունքում կատարված Ծրագրի նախագծի փոփոխությունները հանգեցրին 2014թ. հոկտեմբերին հաստատված ՇՄԱԳ-ի վերանայման և 2015թ. ապրիլին ավարտված և հրապարակված ԲՄԱԳ-ի փոփոխման անհրաժշտության: Ծրագիրը սահմանում է նաև տարատեսակ առողջապահական, անվտանգության, բնապահպանական ու համայնքային/սոցիալական պարտավորություններ, որոնք ծագում են ԲՄԱԳ-ից և պայմանավորված են ՄՖԿ ԿԶ և ՎԶԵԲ ԿՊ-ով: ԲՄԱԳ-ի վերջին տարբերակը, որը նշված է որպես S10, հրապարակվել է հանրության ուսումնասիրման ու մեկնաբանությունների համար 2016 հունիսին՝ նույն թվականի մայիս-հունիս ամիսներին կայացած մի շարք հանրային խորհրդատվություններից ու հանդիպումներից հետո:

## 2 ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ

### 2.1 ՈՒՂԵՑՈՒՅՑՆԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

Լիդիանը ձգտում է համայնքային զարգացման գործողությունները համապատասխանեցնել միջազգային կայուն զարգացման նախաձեռնություններին՝ հարմարեցնելով դրանք տեղական մշակույթին, հնարավորություններին և իրականությանը: ՀԶՊ-ի մշակման ժամանակ օգտագործված երկու հիմնական միջազգային նախաձեռնություններն են՝

- Համաշխարհային բանկի խմբի (ՀԲԽ) չափանիշներն ու ուղեցույցները, և


 <b>GEOTEAM</b>	<b>Համայնքային զարգացման պլան</b>	<b>հունիս 2016</b>
-----------------------------------------------------------------------------------------------------	-----------------------------------	--------------------

- Հանքարդյունաբերության և մետաղների միջազգային խորհրդի (ՀՄՄԽ) կողմից սահմանված Համայնքային զարգացման միջոցները:

Հավասարապես կարևոր է օգտվել Հայաստանի հանրային և մասնավոր հատվածների համար նախատեսված խոշոր հանայնքային զարգացման ծրագրերում ներդրումներ կատարող միջազգային դոնոր կազմակերպությունների (USAID, UNDP, Եվրոպական միություն և այլն) փորձից և ուղղորդվել Լիդիանի համար կարևորություն ներկայացնող գաղափարներով, այն է՝ կայունության ապահովում և տեղական մակարդակով հնարավորությունների ստեղծում:

**2.1.1 Համաշխարհային բանկի խումբ՝ Միջազգային ֆինանսական կորպորացիա ՄՖԿ** Կատարողական չափանիշներով (ԿՉ1, ԿՉ2 և ԿՉ5) սահմանված պահանջներից բացի, ՀԲԽ-ն նախատեսում է նաև արդյունահանող արտադրություններից ստացված եկամուտները շրջակա համայնքների զարգացմանն ուղղելու վերաբերյալ ուղեցույցներ՝ ապահովելով այդպիսով ծրագրի սոցիալական կայունությունը: Նշյալ ուղեցույցների նպատակն է՝

- Ուղղել պետական և մասնավոր եկամուտները համայնքների զարգացման կամ համագործակցման ծրագրերի իրականացմանը,
- Ապահովել բնապահպանական ու սոցիալական երկարաժամկետ օգուտներ՝ ընդլայնելով խոշոր ծրագրերի և փոքր ու միջին ձեռնարկությունների միջև կապերը, խթանելով տեղական շուկաները և աջակցելով համայնքային զարգացմանը Ընկերության սոցիալական պատասխանատվությանը համապատասխան:
- Ընդհանուր առմամբ զարգացման հնարավորությունների ստեղծում ինչպես տեղական կառավարման մարմինների, այնպես էլ համայնքների մակարդակով առողջապահության, կրթության, գյուղատնտեսության և

 <b>GEOTEAM</b>	<b>Համայնքային զարգացման պլան</b>	<b>հունիս 2016</b>
-----------------------------------------------------------------------------------------------------	-----------------------------------	--------------------


ագրոքիզնեսի աջակցության, փոքր բիզնեսի զարգացման, տեղեկատվական և իրազեկման արշավների մասով:

ՄՖԿ Կատարողական չափանիշների համաձայն «համայնքային զարգացման ծրագրեր են համարվում այնպիսի ծրագրերը, որոնք խթանում են ընկերությունների կողմից իրականացվող ծրագրերի սահմաններում ազդակիր բնակչության կայուն տնտեսական աճը, շրջակա միջավայրի պաշտպանությունը, կրթությունը, հմտությունների ձևավորումը, առողջապահությունն ու բարեկեցությունը»: Համայնքային զարգացման ծրագրերը (այսուհետ՝ սոցիալական ներդրումային ծրագրեր) նախատեսված են սոցիալական լիզենցիայի պահպանման համար: ՄՖԿ-ի «Ներդրումներ մարդկանց օգտին. Բիզնեսի հնարավորությունների բարելավման միջոցով համայնքների կայունության ապահովում» և «Ռազմավարական համայնքային ներդրումներ. Ընդունված չափանիշների ձեռնարկ» ձեռնարկները ներառում են ընկերությունների համար նախատեսված լրացուցիչ գործնական խորհուրդներ համայնքային զարգացման ծրագրերի մշակման վերաբերյալ<sup>1</sup>:

### **2.1.2 Հանքարդյունաբերության և մետաղների միջազգային խորհուրդ (ՀՄՄԽ)**

ՀՄՄԽ-ի տեսլականը ենթադրում է կենսունակ հանքարդյունաբերություն և օգտակար հանածոների ու մետաղների արտադրություն, որը շատ կարևոր դեր է խաղում ժամանակակից աշխարհում և հանդիսանում է կայուն զարգացման կարևորագույն խթանիչներից մեկը<sup>1</sup>: Այդ նպատակով, ՀՄՄԽ-ի կողմից 2005թ. հրապարակվել է համայնքային զարգացման միջոցներ (ՀԶՄ) ձեռնարկը, որը վերանայվել և վերահրատարակվել է 2012թ.: Այն ներկայացնում է համայնքային զարգացման տարբեր գործիքներ, որոնք խորհրդատվության հետ մեկտեղ նախանշում են համայնքային զարգացման հստակ ուղղություններ:

## **2.2 ԱԶԳԱՅԻՆ ՕՐԵՆՄԴՐՈՒԹՅՈՒՆ**

 <b>GEOTEAM</b>	<b>Համայնքային զարգացման պլան</b>	<b>հունիս 2016</b>
-----------------------------------------------------------------------------------------------------	-----------------------------------	--------------------

Չնայած այն փաստին, որ Հայաստանում առկա չէ համայնքային զարգացման վերաբերյալ առանձին օրենք, այնուամենայնիվ օրենքների առանձին դրույթներ կարգավորում են տեղական ինքնակառավարման, տարածքային վարչարարության և այլ հարցեր: Հանդիսանալով ԲՄԱԳ-ի գործընթացի մաս, ՀԶԲ համապատասխանում է հանքարդյունաբերության վերաբերյալ հայկական օրենքներին (Ընդերքի մասին օրենսգիրք, 2012) և ՇՄԱԳ (Շրջակա միջավայրի մասին օրենք, 2014թ.)՝ դրանց համապատասխան փոփոխություններով:

## **2.3 ԼԻՂԻԱՆԻ ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԿԱՆՈՆԱԳԻՐՔԸ**


Լիղիանի համայնքային զարգացման ծրագրերը նախատեսվում է իրականացնել ընկերության կորպորատիվ կառավարման շրջանակներում՝ ընկերության քաղաքականության և Կանոնագրքով սահմանված կարգով:

### **2.3.1 Սոցիալական քաղաքականություն**

Լիղիանի սոցիալական քաղաքականության շրջանակներում սոցիալական հարցերի պատշաճ կառավարումը համարվում է կարևորագույն առաջնահերթություն: Այն արտացոլում է երկարատև արդյունավետ հարաբերություններ կառուցելու, տեղական համայնքների հետ գործընկերական հարաբերություններ ձևավորելու և համապատասխան համայնքային ծրագրերին աջակցելու ընկերության պարտավորությունը:

Լիղիանի Համայնքային քաղաքականությունը սահմանում է հետևյալը.

- «Լիղիանը դիտարկում է սոցիալական հարցերի պատշաճ կառավարումը որպես ընկերության կարևորագույն առաջնահերթություններից մեկը և հավատարիմ է իր գործընկերների, մասնավորապես Ծրագրին առնչվող համայնքների հետ կայուն հարաբերություններ ձևավորելու գաղափարին: Լիղիանը ձգտում է փոխադարձ հարգանքի և փոխընթացման, ակտիվ գործընկերական և երկարաժամկետ պարտավորվածության հարաբերություններին...

 <b>GEOTEAM</b>	<b>Համայնքային զարգացման պլան</b>	<b>հունիս 2016</b>
-----------------------------------------------------------------------------------------------------	-----------------------------------	--------------------


- Առավելագույնին հասցնել Ծրագրից ակնկալվող օգուտները, Ընկերությունը ձգտում է նաև խթանել համայնքային ծրագրերը, որոնք ունակ են ապահովել կայուն զարգացում առանց կախվածության ձևավորման»:

### **3 ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԼԱՆԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ**

Ընկերությունը 2007թ-ից ի վեր աջակցում է մոտակա համայնքներում գյուղական ենթակառուցվածքների և զարգացման ծրագրերի իրականացմանը, և Լիդիանը շահագրգռված է շարունակել դրանք՝ երկարաժամկետ համագործակցության համար կայացած գործընկերներ ունենալու, տեղական բիզնեսի հնարավորությունները բարելավելու ու տեղացի մարդկային ռեսուրսները լավագույնս օգտագործելու հեռանկարով: 2012թ-ից Ընկերությունը որդեգրել է ավելի ռազմավարական մոտեցում զարգացման նախաձեռնություններն իրական պահանջներին համապատասխանեցնելու նպատակով, մասնավորապես՝ ուսուցման կազմակերպում և տեղում բիզնես հնարավորությունների ստեղծում, առողջապահության վերաբերյալ իրազեկում և կրթություն՝ միևնույն ժամանակ խթանելով Ծրագրի առկայությամբ պայմանավորված զարգացման հնարավորությունները:

Ստորև ներկայացված են Լիդիանի կողմից որդեգրված սկզբունքները համայնքային զարգացման վերաբերյալ.


- Լիդիանի համայնքային զարգացման ծրագրերը պետք է հավասար հնարավորություններ ապահովեն բոլոր համայնքների համար,
- Համայնքային ներդրումների հիմնական առաջնահերթությունները սահմանվում են մասկանցության, համայնքային կարիքների և ցանկությունների պարբերական ստուգման և նրանց հետ իրականացվող շարունակական խորհրդատվության միջոցով,
- Կոնկրետ ժամանակահատվածի համար անհրաժեշտ է սահմանել միջամտության կոնկրետ ոլորտներ՝ նոր պայմաններին ու փոփոխություններին հարմարվելու ճկունությամբ,

 <b>GEOTEAM</b>	<b>Համայնքային զարգացման պլան</b>	<b>հունիս 2016</b>
-----------------------------------------------------------------------------------------------------	-----------------------------------	--------------------

- Անհրաժեշտ է սերտորեն համագործակցել գործընկեր կազմակերպությունների հետ ծրագրերի մշակման և իրականացման ժամանակ,
- Համայնքային զարգացման և այլ ծրագրերի նկատմամբ ապահովել համատեղ մշտադիտարկում և վերահսկողություն՝ գործընկերների և համայնքների համար ապահովելով պատշաճ հաշվետվողական համակարգ,
- Խթանել գենդերային հավասարությունը և ապահովել կանանց՝ որպես ծրագրի կողմի մասնակցությունը համայնքային զարգացման ծրագրերում,
- Զարգացնել մասնավոր և պետական հատվածների միջև գործընկերական հարաբերություններն ու համագործակցությունը միջազգային դոնորների և տեղական ու միջազգային կազմակերպությունների հետ,
- Տեղական բիզնեսի զարգացման համար ստեղծել հնարավորություններ, այդ թվում՝ տեղական կառավարման մարմինների, բիզնեսների, երիտասարդների և համայնքի անդամների համար, պատշաճորեն կառավարել հողօգտագործմամբ պայմանավորված ավելացած ֆինանսական հոսքերը, նվազեցնել երկարաժամկետ կախվածությունը Լիդիանից, համակցել ստեղծվող հնարավորությունները առկա հմտությունների և պրակտիկ գիտելիքների հետ նոր գիտելիքների կիրառման նպատակով,
- Ժամանակի ընթացքում համայնքներից ու գործընկերներից ակնկալել վերջիններիս մասնակցությունն ու համաֆինանսավորումը իրականացվող սոցիալական միջոցառումներում,
- Խթանել շահառու ընկերություններին իրականացված ծրագրերի նկատմամբ պատասխանատվություն ու շարունակականության ապահովման պարտավորություն ստանձնելու առումով:

Լիդիանի համայնքային զարգացման մոտեցումը խստորեն բացառում է հետևյալը.

- Պետական պաշտոնյանրին աշխատավարձ վճարելը, և

 <b>GEOTEAM</b>	<b>Համայնքային զարգացման պլան</b>	<b>հունիս 2016</b>
-----------------------------------------------------------------------------------------------------	-----------------------------------	--------------------


- Համայնքի առանձին անդամների կամ ղեկավարների, ինչպես նաև քաղաքական կուսակցությունների կամ կրոնական կազմակերպությունների օգտին որևէ վճարումների կատարումը:

Սոցիալական ծրագրերի նպատակ է՝ նվազեցնել, մեղմել և հատուցել տնտեսական գործունեությամբ պայմանավորված բացասական սոցիալական ազդեցությունները՝ հնարավորության դեպքում խթանելով դրական սոցիալական ազդեցությունները միջազգայնորեն ընդունված լավագույն չափանիշներով: ԲՄԱԳ-ի և այլ հարակից ուսումնասիրությունների արդյունքում ընտրվել են կոնկրետ միջոցառումներ (օրինակ՝ կենսամիջոցների վերականգնման պլան)՝ հնարավոր բացասական ազդեցությունները կառավարելու և վերացնելու համար: Սույն համառոտագրի առարկա հանդիսացող սոցիալական ներդրումային ծրագրերն ուղղված են դրական սոցիալական ազդեցությունների ապահովման:

## **4 ՄԻՆՉ ՕՐՍ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՁԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ**

### **4.1 ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

Աշխարհագրական տեսանկյունից Գորայքի և Սարավանի գյուղական համայնքները (որոնք ներառում են Սարավան, Սարալանջ և Ուղեձոր գյուղերը) գտնվում են Ամուլսար ծրագրի տարածքից մոտ 3-8 կմ հեռավորության վրա: Ծրագրի տարածքին ամենամոտ գտնվող գյուղը Գնդեվազն է, որը գտնվում է կույտային տարրավազման հրապարակից դեպի հյուսիս մոտ 1կմ հեռավորության վրա: Ջերմուկ քաղաքը, որի բնակչությունը կազմում է մոտ 4000 հոգի, գտնվում է Տիգրանես/Արտավազդես և էրատո բացահանքերի տարածքից մոտ 10 կմ հեռավորության վրա: Թվով մոտ 1800 գյուղական համայնքների բնակիչներից բացի, նշյալ տարածքում առկա են սեզոնային հովիվներ: 2012թ. սեպտեմբերին Ծրագրի նախնական զբաղեցրած տարածքը սահմանագծելու նպատակով անցկացվեց սեզոնային հովիվների մարդահամար, որը բացահայտեց մոտ 58 սեզոնային հովիվների, որոնք բնակվում են տվյալ տարածքում ամառային


 <b>GEOTEAM</b>	<b>Համայնքային զարգացման պլան</b>	<b>հունիս 2016</b>
-----------------------------------------------------------------------------------------------------	-----------------------------------	--------------------

ամիսների ընթացքում: 2014թ. ամռանն ու 2015 թ. աշնանը կատարվեց հովիվների վերաբերյալ տվյալների ստուգում հանքի նոր նախագծի հետ կապված. Հովիվների շրջանում 2015թ. աշնանն անցկացված ամենավերջին ուսումնասիրությունը բացահայտեց արտոնագրման տարածքում առկա մոտ 40 հովիվների:

Մոտակա գյուղական համայնքներում հիմնական կենսամիջոց է համարվում գյուղատնտեսությունն ու անասնաբուծությունը: Տվյալ տարածքում առկա բոլոր բնակավայրերն ու համայնքային խմբերը ունեն տնտեսական և ենթակառուցվածքային խնդիրներ: Անցյալում իրականացված ուսումնասիրությունների<sup>1</sup> արդյունքում ի հայտ եկան տնտեսական աճի խոչընդոտներ՝ սկսած որոշ տարածքներում հողերի ցածր պտղաբերությունից մինչև արտադրության համար անհրաժեշտ պահեստային և առևտային տարածքների բացակայություն, ինչպես նաև շատ ցածր մակարդակի զբաղվածություն և/կամ նոր հողեր մշակելու, անասնապահություն վարելու, սարքավորումներ ձեռքբերելու սահմանափակ հնարավորություններ և գյուղատնտեսական միջոցներ:

Ջերմուկ քաղաքի տնտեսությանը բնորոշ է զբոսաշրջությունը, հանքային ջրերի արտադրությունը և տեղական այլ ծառայությունները: Ջերմուկի զբոսաշրջության զարգացման ներուժն ուսումնասիրվել է ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության հետ մեկտեղ իրականացված գնահատման ժամանակ: 2008թ. դեկտեմբերին ՀՀ Կառավարության թիվ 1064-Ն որոշմամբ Ջերմուկը ճանաչվեց Ջրոսաշրջության կենտրոն, ինչի հետ կապված 2010թ. «Tiger» շվեյցարական խորհրդատվական ընկերության կողմից մշակվեց Ջերմուկի զարգացման կոնցեպտուալ պլան, որը ենթադրում է տարածաշրջանում դահուկային սպորտի և զբոսաշրջության այլ տեսակների զարգացում: Տվյալ պահի դրությամբ այդ Պլանը դեռ չունի անհրաժեշտ ֆինանսավորում: 2013թ. փետրվարին Գեոթիմի կողմից կատարվեց Ջերմուկում զբոսաշրջության ուսումնասիրություն, որը բացահայտեց տուրիզմի ներկայիս ուղղությունները, առկա մարտահրավերները և զբոսաշրջության զարգացման առկա սահմանափակումները՝ հաստատելով 2008թ. ուսումնասիրությամբ հայտաբերված հիմնական ոլորտները, որտեղ անհրաժեշտ է իրականացնել ծավալում բարելավումներ: Ջեկույցի արդյունքում մշակվեց



 <b>GEOTEAM</b>	<b>Համայնքային զարգացման պլան</b>	<b>հունիս 2016</b>
-----------------------------------------------------------------------------------------------------	-----------------------------------	--------------------


աղյուսակ, որտեղ ներկայացված է 2008-2013թթ տուրիզմի առաջընթացի և զարգացման խոչընդոտների համեմատական վերլուծություն:

## 4.2 ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ 2007-15


2007թ-ից մինչև 2016 ապրիլը Լիդիանի կողմից Գորայքում, Գնդեվագում, Ջերմուկում և Սարավանում նախաձեռնվել է առնվազն 120 կամավոր համայնքային զարգացման ծրագրեր: Ստորև ներկայացնում ենք վերոնշյալ ժամանակահատվածում Լիդիանի կողմից իրականացված ծրագրերի բաշխումը ըստ կոնկրետ համայնքի և ժամանակագրական կարգով.

## 4.3 ԳՈՐԱՅՔ

Երբ	Ինչ
1 2008	Ջրի քլորացման սարքի տրամադրում ջրի որակի բարելավման նպատակով
2 2009	Հեռուստաալիքների հեռարձակման որակի բարելավում տվյալ տարածքում
3 2009	Մանկապարտեզի անձնակազմի աշխատավարձի վճարում
4 2010	Խմելու ջրի ներքին ցանցի արդիականացում
5 2010	Ջրի բաշխման ներքին խողովակների նորացում
6 2010	Համայնքի կենտրոնի վերանորոգում
7 2010	Առողջապահական կենտրոնին սարքավորումների տրամադրում (ռենտգեն սարքավորում և ցենտրիֆուգա)
8 2010 մինչ օրս-	Երկրաբանություն և հանքագործություն ուսումնասիրող ուսանողների աջակցում
9 2010/2011	Գյուղական ճանապարհների վիճակի բարելավում
10 2011	‘Kinderwall’ ծրագիր՝ երեխաների համար անվճար ինտերնետ ռեսուրս

 <b>GEOTEAM</b>	<b>Համայնքային զարգացման պլան</b>	<b>հունիս 2016</b>
-----------------------------------------------------------------------------------------------------	-----------------------------------	--------------------


<b>11</b>	2011	Երեխաների համար խաղահրապարակի կառուցում
<b>12</b>	2011/12	Աղբի հեռացման կազմակերպում շաբաթը մեկ անգամ հաճախականությամբ
<b>13</b>	2012	Համայնքի գրադարանի/ուսումնական կենտրոնի ամբողջական վերանորոգում և կահավորում
<b>14</b>	2012	Հանրային դպրոցի վերանորոգման աջակցություն
<b>15</b>	2012	«Գործընկերություն առողջության նպատակով» ծրագիր, առողջության վերաբերյալ կրթություն, իրազեկում և ծառայությունների բարելավում
<b>16</b>	2012/13	«Նոր տեխնոլոգիաների միջոցով կենսակերպի բարելավում» եկամուտ ստեղծող ծրագիր
<b>17</b>	2012/13	«Դպրոցներ սպորտի և խաղաղության համար» երեխաների/երիտասարդների զարգացման ծրագիր
<b>18</b>	2012/13	Վաճառքի համար այգեգործություն ծրագրի առաջին և երկրորդ տարիները
<b>19</b>	2014	Զերմոցի ծրագրի աջակցություն
<b>20</b>	2014	Անասնաբուծության ծրագիր
<b>21</b>	2014	Դպրոցներ սպորտի և խաղաղության համար
<b>22</b>	2014	Թատրոնի և դերակատարության միջոցով երեխաների ուսուցում բնապահպանական թեմաներով
<b>23</b>	2014-2015/16	Բժշկական կետի վերանորոգում, այդ թվում՝ ատամնաբուժարանի ամբողջական նորացում
<b>24</b>	2015/2016	Անասնաբուծություն. Արհեստական սերմնավորում, տեղացի ֆերմերների համար հնարավորությունների ընդլայնում
<b>25</b>	2015	Բրոկոլիի արդյունաբերական արտադրություն, նոր բուսատեսակի աճեցման համար աջակցություն
<b>26</b>	2015	Դպրոցներ սպորտի և խաղաղության համար, երիտասարդական ծրագիր, ամառային ճամբար և այլն

 <b>GEOTEAM</b>	<b>Համայնքային զարգացման պլան</b>	<b>հունիս 2016</b>
-----------------------------------------------------------------------------------------------------	-----------------------------------	--------------------

<b>27</b>	2015/2016	Wiki-media ամառային ճամբար
<b>28</b>	2015/2016	Ոսանողների աջակցման ծրագիր
<b>29</b>	2015/2016	Շաբաթական աղբահանության կազմակերպում
<b>30</b>	2015	Դպրոցում բնապահպանական դասընթացի կազմակերպում աղբի կառավարման թեմայով
<b>31</b>	2015/16	Առողջ համայնքներ հիմնադրամ՝ հոգալով անհատների առողջական կարիքները
<b>32</b>	2016	Տեղացի երեխաների/երիտասարդների համար պարի խմբի ձևավորում
<b>33</b>	2016	Ենթակառուցվածք. Համայնքային կենտրոնի տանիքի վերանորոգում (օգտագործվում է որպես Գեոթիմի լաբորատորիա)
<b>34</b>	2016	Համաշխարհային բանկի կողմից իրականացվող խմելու ջրի բարելավման ծրագրի համաֆինանսավորում

#### 4.4 ՍԱՐԱՎԱՆ ԳՅՈՒՂ (ՍԱՐԱՎԱՆ, ՍԱՐԱԼԱՆՋ ԵՎ ՈՒՂԵՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԸ ՆԵՐԱՌՅԱԼ)


Երբ		Ինչ
<b>32</b>	2009	Ոռոգման ներքին համակարգի վերանորոգում
<b>33</b>	2010	Երկրաբանություն ուսումնասիրող ուսանողների շարունակական աջակցություն
<b>34</b>	2011/2012	Ողջ գյուղի համար բնական գազի մատակարարման ապահովում
<b>35</b>	2012	Շաբաթական աղբահանության կազմակերպում
<b>36</b>	2012	«Գործընկերություն առողջության նպատակով» ծրագիր, առողջության վերաբերյալ կրթություն, իրազեկում և ծառայությունների բարելավում

 <b>GEOTEAM</b>	<b>Համայնքային զարգացման պլան</b>	<b>հունիս 2016</b>
-----------------------------------------------------------------------------------------------------	-----------------------------------	--------------------


37	2012/13	«Դպրոցներ սպորտի և խաղաղության համար» երեխաների/երիտասարդների զարգացման ծրագիր
38	2014	Դպրոցի աջակցման ծրագիր՝ ներքին ջրահեռացման համակարգի և դպրոցի համար նոր ճաշարանի ապահովմամբ
`	2014	Պարի խմբի ձևավորում
40	2014	Թատրոնի և դերակատարության միջոցով երեխաների բնապահպանական թեմաներով ուսուցանում
41	2015	Ոռոգման ջրի համակարգի նորացման համաֆինանսավորում
42	2015	Մանկական խաղահրապարակ
43	2015	Տեղական պարի խմբի ստեղծում և շարունակական աջակցում
44	2015/16	Wiki-media Ամառային ճամբար
45	2015	Դպրոցում բնապահպանական դասընթացի կազմակերպում աղբի կառավարման թեմայով
46	2015/16	Ուսանողների աջակցման ծրագիր
47	2015	Կանանց համար առաջնային առողջապահություն (Breast light)
48	2015/16	Առողջ համայնքներ հիմնադրամ՝ հոգալով անհատների առողջական կարիքները
49	2016	Շաբաթական աղբահանության կազմակերպում
50	2016	Կենսակերպի բարելավում հողի ավելի կալ կառավարման միջոցով

## 4.5 ԳՆԴԵՎԱԶ

Երբ	Ինչ
-----	-----

 <b>GEOTEAM</b>	<b>Համայնքային զարգացման պլան</b>	<b>հունիս 2016</b>
-----------------------------------------------------------------------------------------------------	-----------------------------------	--------------------


Երբ	Ինչ
49 2010	Երկրաբանություն ուսումնասիրող ուսանողների շարունակական աջակցություն
50 2011	Մանկապարտեզի ամբողջական վերանորոգում
51 2011	12 աշխատող ունեցող տնկարանի հիմնում
52 2011	Գեոթիմի պարի խմբերի շարունակական աջակցում
53 2012	5 կմ ծառուղու հիմնում
54 2012	Շաբաթական աղբահանության կազմակերպում
55 2012	«Գործընկերություն առողջության նպատակով» ծրագիր, առողջության վերաբերյալ կրթություն, իրազեկում և ծառայությունների բարելավում
56 2012/13	«Դպրոցներ սպորտի և խաղաղության համար» երեխաների/երիտասարդների զարգացման ծրագիր
57 2013	Տնկարանի ծրագիր
58 2013/14	Գեոթիմի պարի խմբերի շարունակական աջակցում
59 2014	Մրգերի չրանոց ծրագիր. Տեղական կոոպերատիվների հիմնում, սարքավորումների ապահովում և տեխնիկական աջակցություն
60 2014	«Երիտասարդ տեխնիկ» արտադպրոցական ծրագիր
61 2014	Թատրոնի և դերակատարության միջոցով երեխաների ուսուցում բնապահպանական թեմաներով
62 2014	Դպրոցական սպորտ, դպրոցի համար դրսի սպորտային հրապարակի կառուցում
63 2014	Մանկապարտեզի համար նոր խաղահրապարակ
64 2015/16	Չորանոցի աջակցում. Կոոպերատիվ, մրգերի չորացման գործողություններ
65 2015	Ջերմոցի արդյունաբերական շահագործման միջոցով եկամուտների ապահովում

 <b>GEOTEAM</b>	<b>Համայնքային զարգացման պլան</b>	<b>հունիս 2016</b>
-----------------------------------------------------------------------------------------------------	-----------------------------------	--------------------


	Երբ	Ինչ
66	2015/16	Wiki-media ամառային ծրագիր
67	2015	Դպրոցում բնապահպանական դասընթացի կազմակերպում աղբի կառավարման թեմայով
68	2015/16	Ուսանողների աջակցման ծրագիր
69	2015	Կանանց համար առաջնային առողջապահություն (Breast light)
70	2015/16	Առողջ համայնքներ հիմնադրամ՝ հոգալով անհատների առողջական կարիքները
71	2015/16	Գնդեվազի պարի խմբի շարունակական աջակցում
72	2015	Համայնքային կենտրոնի բարեկարգման աջակցում և գյուղի ջրահեռացման համակարգի վերանորոգում
73	2015/16	Դպրոցի մեկուսացման ծրագիր. Դպրոցի 54 պատուհանների փոխարինում

#### 4.6 ՁԵՐՄՈՒԿ ԵՎ ԿԵՉՈՒՑ

	Երբ	Ինչ
74	2011	Քաղաքային հիվանդանոցի համար նոր շտապ օգնության մեքենայի տրամադրում
75	2013	Ջերմուկի գլխավոր բժշկի վերապատրաստում արտասահմանում
76	2011, 2012, 2013 & 2014	Հայաստանի շախմատի ֆեդերացիայի և ակադեմիայի աջակցում՝ Ջերմուկում միջազգային, մանկական և մեծահասակների համար շախմատի մրցաշարերի

 <b>GEOTEAM</b>	<b>Համայնքային զարգացման պլան</b>	<b>հունիս 2016</b>
-----------------------------------------------------------------------------------------------------	-----------------------------------	--------------------

կազմակերպում		
<b>77</b>	2012/13	«Դպրոցներ սպորտի և խաղաղության համար» երեխաների/երիտասարդների զարգացման ծրագիր
<b>78</b>	2013	Ջերմուկի ավագ դպրոցի տարածքում դրսի մարզահրապարակի կառուցման աջակցում
<b>79</b>	2013	Լրացուցիչ երեխաներ ընդունելու նպատակով Ջերմուկի մանկապարտեզի վերանորոգում
<b>80</b>	2013	Ջերմուկի արվեստի դպրոցի վերանորոգում
<b>81</b>	2013	Ջերմուկի դահուկային ենթակառուցվածքի աջակցում
<b>82</b>	2013	Ներդրումներ Ջերմուկի զարգացման հիմնադրամի օգտին
<b>83</b>	2013	Ասֆալտի վերանորոգման ծրագիր
<b>84</b>	2013	Ջերմուկի հիվանդանոցային պայմանների բարելավում
<b>85</b>	2013	Երաժշտական գործիքների տրամադրում
<b>86</b>	2014	Թիվ 1 դպրոցի ջրահեռացման համակարգի բարելավում և ճաշարանի ամբողջական վերանորոգում
<b>87</b>	2014	Մանկական խորի կազմավորում
<b>88</b>	2014	Քաղաքապետարանին երկու ձևամաքրման մեքենաների տրամադրում
<b>89</b>	2014	Թատրոնի և դերակատարության միջոցով երեխաների բնապահպանական թեմաներով ուսուցանում
<b>90</b>	2014	Լույս հիմնադրամի աջակցում
<b>91</b>	2015	Ջերմուկի հրշեջ կայանի վերանորոգում
<b>92</b>	2015/16	Ջերմուկի մանկական պորի աջակցում
<b>93</b>	2015/16	Շախմատի ֆեդերացիայի և ակադեմիայի աջակցում
<b>94</b>	2015/16	Wiki-media ամառային ճամբար
<b>95</b>	2015	Դպրոցում բնապահպանական դասընթացի

 <b>GEOTEAM</b>	<b>Համայնքային զարգացման պլան</b>	<b>հունիս 2016</b>
-----------------------------------------------------------------------------------------------------	-----------------------------------	--------------------

կազմակերպում աղբի կառավարման թեմայով		
<b>96</b>	2015/16	Աղբից հուշանվերների
<b>97</b>	2015	Ջերմուկի ավագ դպրոցի ջրահեռացման համակարգի նորոգում
<b>98</b>	2015	Կանանց համար առաջնային առողջապահություն (Breast light)
<b>99</b>	2015	Առողջ համայնքներ հիմնադրամ՝ հոգալով անհատների առողջական կարիքները
<b>100</b>	2016	Համայնքի ենթակառուցվածքի բարելավում
<b>101</b>	2015	Մատենադարանի աջակցում (Երևան)


#### 4.7 ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԿԱՄԱՎՈՐ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ

Ի հավելումն վերոգրյալի, Լիդիանի կողմից իրականացվել են նաև հետևյալ ֆինանսական ներդրումները տարածաշրջանային զարգացման նպատակով.

- 2008 - 5,000,000 ՀՀ դրամ (ԱՄՆ \$12,200) Սյունիքի մարզի տարածաշրջանային զարգացման համար,
- 2011 - 500,000 ՀՀ դրամ (ԱՄՆ \$1,220) Սյունիքի մարզի տարածաշրջանային զարգացման համար տեղի դպրոցականների առաջադիմության մրցույթի նպատակով,
- 2013 – 10,000,000 ՀՀ դրամ (ԱՄՆ \$24,400) Սյունիքի մարզի տարածաշրջանային զարգացման համար գյուղատնտեսության աջակցման նպատակով, և
- 2014 - 10,000,000 ՀՀ դրամ (ԱՄՆ \$24,400) Ջերմուկի զարգացման հիմնադրամին համայնքային միջոցառումների աջակցման նպատակով:

Վերոնշյալ աջակցությունը տրամադրվել է Ընկերության կողմից ի պատասխան համայնքի որոշ խնդիրներ լուծելու տարածաշրջանային կառույցների կողմից ներկայացված խնդրանքների: Հանդիսանալով պետական մարմին, նրանք հաշվետու չեն Ընկերությանը: Բացի այդ, բացակայում էին կատարված ներդրումների ընթացքին հետևելու մեխանիզմները (ինչը կատարվում է նաև հողի




 <b>GEOTEAM</b>	<b>Համայնքային զարգացման պլան</b>	<b>հունիս 2016</b>
-----------------------------------------------------------------------------------------------------	-----------------------------------	--------------------

հարկերի վճարների հետ, երբ Ընկերությունը գրկված է այդ ռեսուրսների փաստացի օգտագործումը վերահսկելու կամ մշտադիտարկելու հնարավորությունից): Այնուամենայնիվ, ընկերությունը դիտարկում է ծրագրի ստուգման մեխանիզմ մշակելու հնարավորություն՝ համոզվելու համար, որ ֆինանսական ներդրումներն օգտագործվում է նպատակային:

#### **4.8 ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ**

Լիդիանի կողմից դիտարկվել է տեղական շահառու համայնքների միջև ծրագրերի օգուտների բաշխման տարբեր տարբերակներ, ինչից հետո մշակվել է աշխատանքային մեթոդոլոգիա և հիմնավորում, որոնք համառոտ ներկայացված են ստորև:

- Համայնքներին գումարների հատկացման համար հավասարապես կարևորվում են՝ զարգացման կարիքների հստակեցումն ու համապատասխանեցումը, համայնքների մեծությունն ու բնութագիրը, տնտեսական զարգացման կոնկրետ ուղղության ներուժը, ինչպես նաև ծրագրերի ֆինանսավորմանը մասնակցելու թիրախային համայնքների պատրաստվածությունը: Օրինակ՝ Գորայքն ունի անասնաբուծության մեծ հնարավորություններ, ինչը եկամտի զգալի աղբյուր է հանդիսանում, Գնդեվազը ավելի շատ հակված է մրգատու այգիների աճեցմանն ու մրգերի վերամշակմանը: Կոնկրետ ոլորտների աջակցումը համայնքներում ապացուցել է իր արդյունավետությունն ու նպատակահարմարությունը, ի տարբերություն բոլոր համայնքների նկատմամբ միևնույն մոտեցման դրսևորման: Վերոնշյալ առաջնահերթությունների մասին համայնքների բնակիչները տեղեկացվել են բազմաթիվ հանդիպումների և խորհրդակցությունների ժամանակ:
- Նմանապես, ազդակիր համայնքների և ավելի լայն տարածքների միջև ռեսուրսների տարեկան բաշխումը չի կարելի համարել արդարացված հավասար բաշխման գործընթաց: Տարբեր համայնքներ կրում են տարբեր բնույթի և չափի ազդեցություններ՝ առաջացնելով տարաբնույթ գործողություններ և/կամ մոտեցումներ դրսևորելու անհրաժեշտություն, որոշ ծրագրեր ավելի մատչելի են մյուսների համեմատ, որոշ համայնքներ ավելի


 <b>GEOTEAM</b>	<b>Համայնքային զարգացման պլան</b>	<b>հունիս 2016</b>
-----------------------------------------------------------------------------------------------------	-----------------------------------	--------------------

կազմակերպված են և պատրաստական համագործակցության համար քան մյուսները և այլն: Ծրագրի շրջանակներում գումարների հատկացման որոշումները կայացվում են ավելի շատ տվյալ համայնքի կարիքներից ելնելով, այլ որ ծրագրի արժեքով պայմանավորված: Ռեսուրսների հատկացումը ըստ ծրագրերի և համայնքների որպես կանոն կատարվում է տարեկան կտրվածքով՝ տարբեր համայնքներում և/կամ տարածքներում առկա կարիքներից և առաջնահերթություններից ելնելով, համայնքների հետ խորհրդատվությունների արդյունքում, ինչպես նաև հաշվի առնելով տեղական ինքնակառավարման մարմինների պատրաստվածությունը ներդրումներ կատարելու իմաստով:

- Բոլոր ազդակիր համայնքներում իհարկե առկա են միանման զարգացման կարիքներ (գյուղական ենթակառուցվածքները, առաջնային առողջապահությունը, երեխաների/երիտասարդների կրթությունը, ներուժի զարգացումը): Ընկերությունը այս առումով մշակում է ծրագրեր, որոնցից կօգտվեն բոլոր համայնքները: Օրինակ, «Առաջնային առողջապահություն» կամ «Դպրոցներ սպորտի և խաղաղության համար» ծրագրերն իրականացվել են միաժամանակ 3-4 համայնքներում:
- Լիդիանը կարևորում է նաև գործընկերական հարաբերությունների ձևավորումը շահառուների, ազդակիր համայնքների և գործընկեր կազմակերպությունների հետ: Սա նշանակում է, որ նախապատվությունը կտրվի այն շահառու համայնքներին, որոնք պարտավորվում են ստանձնել Ծրագրի շրջանակներում պարտավորություններ և իրենց մասով կատարել ֆինանսական կամ այլ ներդրումներ, և
- Թիրախային համայնքների և թիրախային ոլորտների մասով Ծրագրային հատկացումները կատարվում են նաև պետական մարմինների խնդրանքով, ինչը երբեմն դրսևորվում է պետական պաշտոնյաների կողմից ներկայացված ուղղակի պահանջի ձևով: Սա տեղի է ունենում մարզային կամ պետական մակարդակով:

Համայնքային զարգացմանն ուղղված Ընկերության միջոցառումները շարունակական բնույթ են կրում և հիմնված են վերոնշյալ գործոնների վրա:

Համայնքային զարգացման բոլոր ծրագրերը նախատեսվում է հրապարակել

 <b>GEOTEAM</b>	<b>Համայնքային զարգացման պլան</b>	<b>հունիս 2016</b>
-----------------------------------------------------------------------------------------------------	-----------------------------------	--------------------


պարբերական ֆինանսական և կատարման մասին հաշվետվությունների միջոցով:

## 5 ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԼԱՆ

2016 թ. սկզբին ԲՍԱԳ-ի ավարտման արդյունքում տեղի ունեցավ նաև համայնքային զարգացման նախաձեռնությունների ուղղվածության փոփոխություն՝ հիմնական ծրագրային ռիսկերին ավելի լավ համապատասխանեցնելու նպատակով: Այս ռիսկերը/ազդեցությունները մանրամասնորեն ներկայացված են ԲՍԱԳ-ում, ինչպես նաև յուրաքանչյուր ազդեցության համար սահմանված են մեղմացման միջոցառումներ: Հիմնական ծրագրային ռիսկերը համառոտ ներկայացված են ստորև՝

- Հողի և հողօգտագործման կորուստ, որն առաջացնում է տնտեսական ապակայունություն,
- Ծրագրի իրականացմամբ պայմանավորված տեղի կունենա ներքին միգրացիոն գործընթաց, որը կառաջացնի ապրանքների և կացարանային գների սղաճ և պահանջարկի ավելացում,
- Ուղղակի և անուղղակի զբաղվածության հնարավորություններ,
- Ավանդական կենսակերպի կորուստ, և
- Հողերի վարձավճարներով պայմանավորված եկամուտների ավելացում գյուղապետարանների համար:

Համայնքային զարգացման միջոցառումները չեն կարող մեղմացնել սոցիալական ազդեցությունները, սակայն բազմաթիվ դեպքերում համայնքային ներդրումները կարող են օգնել մեղմացման ծրագրերին ազդակիր համայնքներին ավելի արդյունավետ աջակցություն ապահովելու գործում: Հաջորդող բաժիններում ներկայացված են համայնքային զարգացման գործողությունները ծրագրային ռիսկերին ծառայեցնելու հնարավորությունները:


 <b>GEOTEAM</b>	<b>Համայնքային զարգացման պլան</b>	<b>հունիս 2016</b>
-----------------------------------------------------------------------------------------------------	-----------------------------------	--------------------

## 5.1 ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԱՄԲ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԲՍԱԳ-ի շրջանակներում սահմանվել են տարբեր սոցիալական և բնապահպանական պարտավորություններ՝ հնարավոր զգալի բացասական ազդեցությունները մինչև ընդունելի մակարդակը նվազեցնելու և Ծրագրի իրականացմամբ պայմանավորված հնարավորինս շատ օգուտներ քաղելու նպատակով:


ԲՍԱԳ-ն ուղեկցվում է Պարտավորությունների ցանկով /ՊՑ/, որը հանդիսանում է ներքին փաստաթուղթ և սահմանում է բոլոր այն գործողությունները, որոնք անհրաժեշտ է ձեռնարկել Ծրագրի շրջանակներում բնապահպանական և սոցիալական խնդիրների մասով: Համայնքային զարգացման գործողությունների իրականացման նպատակով, ստորև ներկայացված են մի շարք պարտավորություններ, որոնք արտացոլում են համեմատաբար ընդունելի չափանիշների կառավարման միջոցներ, որոնք արդեն ներառվել են կամ պետք է ներառվեն տարբեր սոցիալական պլաններում, կենսաբազմազանության պլաններում և բնապահպանական կառավարման պլաններում ըստ ԲՍԿՊ-ի: Լիդիանի՝ ՀԶՊ-ին առնչվող հիմնական պարտավորությունները ներկայացված են ստորև.

- Աջակցել տեղական գյուղերի ղեկավար մարմիններին և մարզպետարաններին շինարարության փուլում այլ համայնքներից ակնկալվող ներմիգրացիոն գործողությունների կառավարման հետ կապված:
- Իրականացնել սննդի, ինչպես նաև այլ հիմնական ապրանքների գների սղաճի մշտադիտարկում ուսումնասիրման տարածքում, մասնավորապես Ջերմուկում և այլ փոքր քաղաքներում: Որպես ցուցիչներ կօգտագործվեն առաջին անհրաժեշտության և հիմնական ապրանքներ:
- Իրականացնել տեխնիկական աջակցման ծրագրեր, որոնք նպաստում են տեղի գյուղատնտեսությանը /հողագործություն և անասնաբուծություն/ խթանող տեղական տնտեսական զարգացման նախաձեռնություններին՝

 <b>GEOTEAM</b>	<b>Համայնքային զարգացման պլան</b>	<b>հունիս 2016</b>
-----------------------------------------------------------------------------------------------------	-----------------------------------	--------------------

բերքատվության ավելացման և բարելավված ագրոտեխնիկայի շնորհիվ տնտեսական օգուտների ավելացման նպատակով,

- Խթանել տեղի արտադրանքի վաճառքները շուկայում՝ տեղացիներին աջակցելու նպատակով, ինչը կնպաստի տեղական մակարդակով տնտեսական աճին և սննդի անվտանգությանը:
- Հմտությունների զարգացման նպատակով տեղացիների համար կազմակերպել թրեյնինգներ, որոնք կունենան հստակ ուղղվածություն երկարաժամկետ աշխատանքային հնարավորություններ ապահովելու նպատակով:
- Իրականացնել դեմոգրաֆիկ փոփոխությունների մշտադիտարկում՝ ներառելով գյուղական ենթակառուցվածքները, բնակչությունը, միգրացիոն գործընթացներն ու այլն, գյուղապետերի հետ համագործակցմամբ և «Գյուղի անձնագիր» համակարգի կիրառմամբ:
- Տնտեսական անհավասարությամբ պայմանավորված ազդեցությունների նվազեցման նպատակով իրականացնել աջակցության ծրագրեր, որոնք ուղղված կլինեն տեղական համայնքներում ոչ-արդյունաբերական բնագավառների զարգացմանը:
- Աջակցել և հնարավորության դեպքում խթանել արտաավայրերի կառավարման և բարելավման գործողությունները (օր.՝ նվազեցնելով հովիվների համար սահմանված մուտքի սահմանափակումները)՝ հաշվի առնելով նրանց դերը բնական կենսամիջավայրի և հարակից տեսակների պահպանության գործում,
- Համագործակցել Գնդեվազի, Գորայքի և Սարավանի գյուղապետերի հետ՝ ապահովելու համար կեղտաջրերի մաքրման համակարգերի ներառումը մեծացող համայնքների նախագծերում,
- Հովիվների և գյուղապետերի հետ ուսումնասիրել տարածաշրջանում անասնապահության զարգացման հնարավորությունները՝ կաթի և մսի արտադրությանն ու սպառմանը տեխնիկապես աջակցելու նպատակով:

 <b>GEOTEAM</b>	<b>Համայնքային զարգացման պլան</b>	<b>հունիս 2016</b>
-----------------------------------------------------------------------------------------------------	-----------------------------------	--------------------


Տեխնիկական աջակցման ծրագրերի համար կրնտրվի սեզոնային հովիվների ավելի մեծ խումբ՝ տնտեսական արտադրանքի ծավալն ու տնտեսական գործողությունների տեսակներն ավելացնելու նպատակով:

## 5.2 ՇԱՀԱՌՈՒՆԵՐ

Սոցիալ-տնտեսական ազդեցության տարածքը ներկայացված է երեք մակարդակներով: Ազդեցության ազգային տարածքը ներառում է ողջ երկիրը: Ազդեցության տարածաշրջանային տարածքը ներառում է երկու մարզեր, որոնք գտնվում են հանքի նախագծի և Ծրագրի զբաղեցրած սահմաններում, մասնավորապես՝ Վայոց Ձորն ու Սյունիքը: Ազդեցության տեղական տարածքը ներառում է այն բնակավայրերը, որոնք հավանաբար կկրեն բնապահպանական և սոցիալական ազդեցություններ: Տեղական տարածքը ընդգրկում է «Ծրագրի ազդակիր համայնքները», մասնավորապես՝ երեք ամենամոտը գտնվող գյուղական համայնքների՝ Գորայքի, Գնդեվազի և Սարավանի (այդ թվում՝ Սարալանջի ու Ուղեձորի), Ջերմուկ քաղաքի (այդ թվում՝ Կեչուտի) բնակիչներին և ամառային ամիսների ընթացքում Ծրագրի տարածքում առկա սեզոնային հովիվներին: ԲՍԱԳ-ը ավելի մանրամասնորեն է ներկայացնում տարբեր բնակավայրերի և անձանց վրա ակնկալվող ազդեցությունները:

Լիդիանի կողմից ձեռնարկվող համայնքային զարգացման գործողությունների շահառուներն են հանդիսանում ազդեցության տեղական տարածքի համայնքները: Շահագործման մեկնարկին զուգահեռ նախատեսվում է դիտարկել տարածաշրջանային համայնքային զարգացման միջոցառումների հնարավորությունը՝ ներառելով տեղական գոտուց դուրս գտնվող տարածքներ: Քանի որ համայնքային ներդրումները չեն սահմանափակվի Ծրագրի ազդակիր համայնքներով, ապա նրանք նույնպես կհանդիսանան կարևոր շահառու խումբ:

Շահառուների թվից Լիդիանն առանձնացնում է կանանց, երեխաներին և երիտասարդներին՝ հաշվի առնելով նրանց համեմատական խոցելիությունն ու Ծրագրով պայմանավորված օգուտների շրջանակից դուրս մնալու հավանականությունը: Միևնույն ժամանակ, զարգացման ծրագրերի շահառուների

 <b>GEOTEAM</b>	<b>Համայնքային զարգացման պլան</b>	<b>հունիս 2016</b>
-----------------------------------------------------------------------------------------------------	-----------------------------------	--------------------


ընտրությունը կատարվում է որոշ չափորոշիչներով, որոնք խոցելիությունից բացի, ներառում են նաև ծրագրին մասնակցելու, ծրագրային պահանջները կատարելու և անհրաժեշտության դեպքում շահերը պաշտպանելու պատրաստակամություն:

### 5.3 ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՄԱՀՄԱՆՈՒՄ

ԲՄԱԳ-ի վերաբերյալ խորհրդատվությունների և սոցիալական ելակետային տվյալների հավաքագրման ընթացքում կատարվել է համայնքների կարիքների գնահատում՝ համայնքների հետ համագործակցման եղանակով:

2009թ. հայկական խորհրդատվական «ՄՓՁ» ընկերության կողմից կատարվել է ազդակիր համայնքների կարիքների գնահատում, որտեղ սահմանվել են առկա ենթակառուցվածքները, կարիքները, զարգացման հնարավորություններն ու նմանատիպ այլ տվյալները:

2010թ. WAI-ի թիմը հանդիպում է ունեցել գյուղապետերի հետ՝ երկխոսություն սկսելու և համայնքի կարիքների, ցանկությունների և Ծրագրի ընկալման վերաբերյալ տվյալներ հավաքագրելու նպատակով: Հաջորդող համատեղ գործողությունները տեղի ունեցան 2011-2012 ձմռանը, այդ թվում՝ 2011թ նոյեմբերին իրականացված առողջապահության վերաբերյալ ելակետային անկախ ուսումնասիրությունը, ինչպես նաև 2012թ. հունվարին իրականացված առկա հմտությունների ստուգումն ու էթնոկենսաբանական ուսումնասիրությունը: Այլ ուսումնասիրությունները ներառում են 2012թ. հունիսից-սեպտեմբեր իրականացված սեզոնային հովիվների, 2013 մարտին՝ տուրիզմի, 2013թ ամռանը՝ հողօգտագործման, 2014 թ. հունիսին՝ հմտությունների, 2014թ. հունիս-հուլիսին՝ կենսամիջոցների, 2014-2015թթ՝ էկոհամակարգերի ծառայությունների, 2015թ. աշնանը՝ հովիվների և խոցելի հողօգտագործողների կենսակերպի և 2015թ.՝ Գնդեվազում իրականացված սոցիալտնտեսական ուսումնասիրությունները: Բացի այդ, սոցիալական թիմի կողմից յուրաքանչյուր տարի կատարվում է գյուղի անձնագրերի թարմացում, որոնց տվյալները ներառվել են ԲՄԱԳ-ի համապատասխան բաժիններում: Այս ուսումնասիրությունները նույնպես օգնեցին

 <b>GEOTEAM</b>	<b>Համայնքային զարգացման պլան</b>	<b>հունիս 2016</b>
-----------------------------------------------------------------------------------------------------	-----------------------------------	--------------------

ՀՔՊ-ի մարտահրավերների ըմբռնման և ներդրումների համար հավանական ոլորտների ընտրության գործում:


Այս ուսումնասիրությունները, պաշտոնական արտաքին ու ներքին գնահատումները, շահագրգիռ կողմերի, այդ թվում՝ Համայնքների հետ կապերի կոմիտեների, համայնքների ներկայացուցիչների, գյուղապետերի և Լիդիանի սոցիալական թիմի հետ շարունակական համագործակցությունը օգնեց հասկանալ ազդակիր համայնքներում առկա զարգացման կարիքները:

ԲՍԱԳ-ի ընթացքում համայնքների ներկայացուցիչների կողմից բարձրաձայնած կոնկրետ ենթակառուցվածքների վերաբերյալ խնդրանքները նույնպես հաշվի են առնվել և ներկայացված են Աղյուսակ 5.1-ում:


**Աղյուսակ 5.1. 2009-2016թթ. ուսումնասիրությունների արդյունքում ընտրված կոնկրետ ենթակառուցվածքային և զարգացման առաջնահերթություններ**

Գորայք	Մարավան	Գնդեվազ	Ջերմուկ
Ճանապարհների ասֆալտապատում	Ճանապարհների ասֆալտապատում	Ճանապարհների ասֆալտապատում	Ջերմուկի մանկապարտեզի բարեկարգում
Հանգստի կենտրոնի բարեկարգում և վերանորոգում	Ռոռզման ջրամատակարարման բարելավում	Ռոռզման ջրամատակարարման համակարգի նորացում	Ջերմուկի թիվ 1 դպրոցի կոյուղու համակարգի նորացում
Մանկապարտեզի վերականգնում և վերաբացում	Գազամատակարարում	Առկա փոքր բիզնեսների աջակցում	Ջերմուկի արվեստների դպրոցի բարեկարգում
Մեծաձախ գնման հարմարության ստեղծում	Փողոցի լուսավորում	Փողոցի լուսավորում	Ավագ դպրոցի դահլիճի վերանորոգում
Համայնքում արտադրական	Կոյուղու վերականգնում	Մենդի վերամշակում.	Հրշեջ կայանի, լաբորատորիայի




 <b>GEOTEAM</b>	<b>Համայնքային զարգացման պլան</b>	<b>հունիս 2016</b>
-----------------------------------------------------------------------------------------------------	-----------------------------------	--------------------

<b>Գորայք</b>	<b>Մարավան</b>	<b>Գնդեվագ</b>	<b>Ջերմուկ</b>
գործարանի գործարկում		Մրգի չորանոց և չորանոցի գործակում	բարելավում
Զբաղվախություն	Գնման կետի ստեղծում	Կանանց զբաղվածություն	Ջերմուկի հիվանդանոցի համար սարքավորումներ և ծառայությունների ընդլայնում
Կեղտաջրերի հավաքման և հեռացման համակարգ /կոյուղի/	ԱՎելի լավ որակի ջուր մատակարարելու նպատակով համակարգի բարելավում	Դրսի սպորտհամալիրի բարելավում	Ջերմուկի մանկական խորի աջակցում
Ֆերմերների սուբսիդավորում և աջակցում սերմերի և պարարտանյութերի գնման նպատակով	Անհրաժեշտ է կաթի հավաքագրման կետ	ՀԱմայնքային կենտրոնի նորոգում	Հմտությունների ձևավորում, պլաստիկ պարկերի և այլ թափոնային նյութերի լավագույն օգտագործում
Խմելու ջրի համակարգի բարելավում	Առաջնային առողջապահություն, սկրինինգներ, բուժում և այլն	Մանկական արվեստների, մշակութային և սպորային միջոցառումների աջակցում	Մանկական արվեստների, մշակութային և սպորային միջոցառումների աջակցում
Գյուղի դպրոցի վերանորոգում	Անասնապահություն	Ընտանեկան ջերմոցներ որպես	Կեչուտում երաժշտական

 <b>GEOTEAM</b>	<b>Համայնքային զարգացման պլան</b>	<b>հունիս 2016</b>
-----------------------------------------------------------------------------------------------------	-----------------------------------	--------------------

Գորայք	Սարավան	Գնդեվագ	Ջերմուկ
		Եկամտի աղբյուր և հողի կառավարման գործընթաց	դպրոցի նորացում
Գյուղի բժշկական կետի ջեռուցում, ատամնաբուժարանի ստեղծում	Կանանց զբաղվածություն	Անասնապահություն, արոտավայրերի ավելի լավ օգտագործում	Երիտասարդների զբաղվածություն
Կանանց համար զբաղվածություն	Բժշկական կետի ջրամատակարարում	Երիտասարդների զբաղվածություն	Տուրիզմի զարգացման անհրաժեշտություն
Անասունների գենետիկայի բարելավման անհրաժեշտություն	Համայնքային կենտրոնի բարեկարգում	Դպրոցի վերանորոգում (մեկուսացում, բարելավում)	Տեղական լաբորատորիայի բարեկարգում (սարքավորումներ, բարելավված պայմաններ)
Հողի արդյունավետ օգտագործում (հողի որակազրկման խնդիր)	Առաջնային առողջապահական ծառայությունների ընդլայնում, բժշկական նյութերի մատակարարում	Տեղական ռեսուրսների, օրինակ՝ հողի և այլնի արդյունավետ օգտագործում	
Տեղական պանրի արտադրություն	Երեխաների/երիտասարդների համար ծրագրերի անհրաժեշտություն (ամառային ճամբար և այլն)	Երեխաների/երիտասարդների համար ծրագրերի անհրաժեշտություն (կրթական, ամառային	Երեխաների/երիտասարդների համար ծրագրերի անհրաժեշտություն (կրթական,

 <b>GEOTEAM</b>	<b>Համայնքային զարգացման պլան</b>	<b>հունիս 2016</b>
-----------------------------------------------------------------------------------------------------	-----------------------------------	--------------------


Գորայք	Սարավան	Գնդեվագ	Ջերմուկ
		ճամբար)	ամառային ճամբար)
Երեխաների համար սպորտ, արվեստ և կրթություն		Երեխաների համար սպորտ, արվեստ և կրթություն	

Ընկերության կողմից մշակվում է Տարեկան պլան ըստ համայնքների և ոլորտների բյուջեի բաշխմամբ, որն այնուհետ քննարկվում է և հաստատվում Լիդիանի ղեկավարության և Խորհրդի կողմից, այն ենթակա է նաև քննարկման համայնքի և գյուղի ղեկավարության հետ: Ենթակառուցվածքային ծրագրերը նախատեսվում է դիտարկել ծրագրի ռիսկերի, ինչպես նաև համայնքների և աշխատողների համար առողջ և անվտանգ միջավայր ապահովելու անհրաժեշտության համատեքստում: Բյուջեի հաստատումից հետո, Ընկերությունը լրամշակում է ծրագրերն ու անցնում դրանց իրագործմանը:

Լիդիանի, գործընկեր կազմակերպությունների և շահառուների հետ համատեղ նախատեսվում է շարունակել առկա կարիքների գնահատման գործընթացը՝ չբավարարված կարիքները գնահատելու, դրանց առաջնահերթությունը սահմանելու և տարեկան կտրվածքով լուծման ենթակա խնդիրները պարբերաբար ընտրելու նպատակով:

Դիտարկվում են բոլոր գյուղերում ծրագրերի ընտրություն կատարող կոմիտեների ստեղծման, առկա ՀՀԿԿ-ի ընդլայնման տարբերակներ: Այս գործընթացը կօգնի համայնքի անդամներին ավելի լավ պատկերացում կազմել առկա խնդիրների վերաբերյալ, սահմանել դրանց առաջնահերթությունը և իրականացվող ծրագրերի նկատմամբ ձևավորել սեփականատիրական մոտեցում:

## 5.4 ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ


 GEOTEAM	Համայնքային զարգացման պլան	հունիս 2016
----------------------------------------------------------------------------------------------	----------------------------	-------------

#### 5.4.1 Արտաքին կազմակերպությունների հետ համագործակցում

Լիդիանի կարծիքով, որպես հանքարդյունաբերական ընկերություն, ավելի ճիշտ կլինի համայնքային զարգացման ծրագրերն իրականացնել համապատասխան փորձառու տեղական կազմակերպությունների հետ համագործակցման եղանակով: Տեղական կառավարման մարմինների և զարգացման ուղղվածություն ունեցող այլ կազմակերպությունների հետ արդյունավետ գործընկերությունը կարևորվում է վերոնշյալ ծրագրերի հաջող իրականացման իմաստով: Լիդիանը հանդես կգա որպես խթանող գործոն, համակարգող և համահովանավոր համապատասխան համայնքային զարգացման գործողությունների համար՝ ապահովելով մշտադիտարկում և գնահատում, համագործակցելով տվյալ ոլորտի այլ մասնակիցների հետ և հետագա ծրագրերը մշակելով քաղված դասերից ստացված փորձառությամբ:

Լիդիանն ակտիվորեն դիտարկում է մոտակա տարիների ընթացքում գործընկերական հարաբերություններ ստեղծելու հնարավորությունները: Բոլոր գործընկերական ծրագրերը ձևակերպվում են և կշարունակեն ձևակերպվել գրավոր պայմանագրերի ձևով, որոնք սահմանում են կողմերի հաշվետվողականության, դերակատարման և պատասխանատվությունների բաշխման հստակ պահանջներ: Պայմանագրերն ուղեկցվում են համապատասխան առաջարկներով և բյուջեներով, որպիսով Ընկերությունը կարողանա հետևել իրականացման ընթացքին:

Որպես գործընկերության պայմանագրերի պայման, Լիդիանն ակնկալում է, որ իր գործընկերները կմասնակցեն ծրագրերի ֆինանսավորմանը՝ դրամական հատկացումների կամ այլ տեսակի ներդրումների միջոցով, ինչպես նաև մասնակցություն կունենան ծրագրերի նախագծման, մշտադիտարկման և հաշվետվությունների ներկայացման գործընթացներում: Նման գործընկերության կարևոր առավելությունը կայանում է նրանում, որ ծրագիրն իրականացնող գործընկերներն ապահովում են համայնքների մասնակցությունն ու ներգրավումը ծրագրի նախագծման գործողություններում և հետևում են դրանց իրագործմանը: Մինևույն ժամանակ Լիդիանը նախատեսում է ինքնուրույն իրականացնել որոշ փոքրածավալ ծրագրեր (կրթական, իրազեկման, փոքր ենթակառուցվածքների):


 <b>GEOTEAM</b>	<b>Համայնքային զարգացման պլան</b>	<b>հունիս 2016</b>
-----------------------------------------------------------------------------------------------------	-----------------------------------	--------------------

Ավելի մեծ ծածկույթ և արդյունքներ ապահովելու առումով, գործընկեր կազմակերպությունների հետ համագործակցումն իհարկե ավելի նախընտրելի տարբերակ է:

Ընկերությունը դիտարկում է նաև տարբեր ֆինանսավորման աղբյուրներ ունեցող այլ ծրագրերի շրջանակներում համագործակցելու հնարավորությունը, ինչը թույլ կտա կողմերին համայնքներում ընտրել որոշ սեզամենսներ կամ խոցելի խմբեր համայնքային զարգացման ծրագրերում (առանց Ընկերության համար հացվելյալ ծախսերի) ներգրավելու նպատակով: Վերոգրյալի լավ օրինակ է հանդիսանում Տեսողության պահպանման ծրագիրը, որի շրջանակներում նախատեսվում է անցկացնել աչքի սկրինինգ հետազոտություններ և բուժումներ Ծրագրի ազդակկիր համայնքներում՝ այլ աղբյուրներից ապահովված ֆինանսավորմամբ: Մեկ այլ լավ օրինակ է հանդիսանում 2-3 ազդակկիր համայնքների համար արդեն մի քանի տարի ֆինանսավորվող անասնապահական ծրագիրը:


#### **5.4.2 Շահառուները որպես զարգացման գործընկերներ**

Համայնքային զարգացման ծրագրերի հաջող իրագործումը ենթադրում է բարձր աստիճանի պարտավորվածություն շահառուների, ինչպես նաև զարգացում ապահովող անձանց և գործակալությունների կողմից: Լիդիանը կարող է միայն աջակցել այնպիսի ծրագրերին, որտեղ մասնավոր և համայնքային մակարդակով առկա է համայնքային զարգացման գործում ակտիվորեն մասնակցելու և ներդրում ունենալու շահառուների պատրաստվածություն: Արդեն իսկ կան նման մասնակցության և գործընկերության լավ օրինակներ, երբ գյուղապետարանը, ինչպես նաև անհատ շահառուներ դրամական ներդրումներ են անում սոցիալական ծրագրերում. օրինակ՝ Գորայքի և Գնդեվազ ջերմոցները, Գորայքի ամառային ճամբարը, Մարավանում ոռոգման համակարգի բարելավումը, Գնդեվազում կոյուղու համակարգի նորոգումը, ինչպես նաև Գնդեվազում համայնքային կենտրոնի բարեկարգումը: Սա օգնում է ձևավորել սեփականատիրական մոտեցում և ապահովել դրական արդյունքների շարունակականություն և որակի բարելավում: Օրինակ, շահառուներն ու տեղական ինքնակառավարման մարմիններն ակտիվ մասնակցություն են ունեցել

 <b>GEOTEAM</b>	<b>Համայնքային զարգացման պլան</b>	<b>հունիս 2016</b>
-----------------------------------------------------------------------------------------------------	-----------------------------------	--------------------

գյուղատնտեսությունում բերքատվության բարձրացմանն ուղղված ծրագրում: Նման գործընկերության մոդելը շահառուների մոտ ձևավորում է անձնական շահ և հետաքրքրվածություն ծրագրի նկատմամբ, ինչն իր հերթին բարձրացնում է շահառուների պատասխանատվության մակարդակը: Տեղական ինքնակառավարման մարմիններից նույնպես ակնկալվում է ներդրում՝ ինչպես դրամական, այնպես էլ այլ ձևով (աշխատուժ, նյութեր, կամավոր աշխատանք և այլն), ինչը կախված է առկա ռեսուրսներից: Այս պահանջն ու ուղերձը հստակորեն և զգուշորեն փոխանցվել է գյուղի ղեկավարությանը:

Լիդիանն արդեն իսկ ունի ձևավորված հարաբերություններ Սարավանի, Գորայքի, Գնդեվազի և Ջերմուկի համայնքների հետ: Այդ հարաբերությունների հիմնական շարժիչ ուժն է հանդիսանում Համայնքների հետ կապի կոմիտեն /ՀՀԿԿ/, որը հանդիսանում է տվյալ գյուղերում և քաղաքում ստեղծված ներկայացուցչական խումբ: Լիդիանի կողմից ընտրվել են ներկայացուցիչներ տարբեր բնագավառներից, այդ թվում՝ առողջապահության, կրթության, փոքր բիզնեսի և տեղական կառավարման մարմինների կազմից: Լիդիանի՝ Համայնքի հետ կապերի պատասխանատուն և Սոցիալական զարգացման մենեջերը ամեն ամիս հանդիպումներ են ունենում ՀՀԿԿ-ի հետ՝ հիմնական տեղեկատվությունը և բնապահպանական ու սոցիալական զարգացումների մասին թարմ տեղեկությունները փոխանակելու և հետադարձ կապն ապահովելու նպատակով: Գեոթիմի՝ սոցիալական ծրագրերի տեղացի օգնականները, որոնք աշխատում են Գնդեվազում, Սարավանում և Գորայքում, օգնում են կազմակերպել և մասնակցել բոլոր ՀՀԿԿ և այլ համայնքային հանդիպումներին: Բոլոր ՀՀԿԿ-ում ներկայացված են կանայք, և այդ հանդիպումների նպատակն է ապահովել ազատ և բաց քննարկումներ՝ տարիքից, սեռից և սոցիալական դիրքից անկախ: Լիդիանը համագործակցում է նաև բոլոր ազդակիր գյուղերի գյուղապետերի և Ջերմուկ քաղաքի քաղաքապետի հետ: Լիդիանը նախատեսում է ընդունել տեղացի օգնական Ջերմուկից, ով մնացած օգնականների հետ միասին կապահովի տեղեկատվության տարածում (օր՝ Համայնքի տեղեկագրերը), կկազմակերպի հանրային քննարկումներ և հանդիպումներ կոնկրետ գյուղում, կայցելի գործընկեր կազմակերպություններ՝ ծրագրի ընթացքին հետևելու նպատակով, ինչպես նաև կիրականացնի ուսումնասիրություններ տվյալների հավաքագրման նպատակով:

 <b>GEOTEAM</b>	<b>Համայնքային զարգացման պլան</b>	<b>հունիս 2016</b>
-----------------------------------------------------------------------------------------------------	-----------------------------------	--------------------


Վերոգրյալի լավ օրինակ է հանդիսանում կենսամիջոցների ուսումնասիրությունը, որն իրականացվել է 2014 և 2015թթ ամռանը, երբ տեղացի օգնականներն անցկացրեցին հարցումներ տեղի բնակիչների շրջանում՝ հավաքելով անհրաժեշտ տեղեկություններ Լիդիանի կողմից սահմանված կարգով: Նպատակն է հզորացնել առկա ներուժն ու ժամանակի ընթացքում ապահովել պարտականությունների փոխանցման հնարավորություն:

### 5.5 ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԹԻՐԱԽԱՅԻՆ ՈԼՈՐՏՆԵՐ

Վերոնշյալ զարգացման մոտեցումը, ծրագրի ռիսկերն ու բացահայտված համայնքային կարիքները օգնում են սահմանել համայնքային զարգացման թիրախային ոլորտները: Ստորև ներկայացված աղյուսակը համառոտ ներկայացնում է շինարարության և շահագործման փուլերի համար, Ընկերության կողմից ազդակիր համայնքների հետ համագործակցման եղանակով, ընտրված ներգրավման ոլորտները: Հնարավորության դեպքում կիրականացվեն երկարաժամկետ /2-3 տարվա/ ծրագրեր՝ ակնկալվող դրական ազդեցությունների շարունակականությունն ապահովելու նպատակով: Բոլոր ծրագրերը կնախագծվեն այնպես, որ Ընկերությունը կարողանա գոյություն ունենալ կոնկրետ ժամանակահատվածի ավարտից հետո (այլ գործընկերներին ծրագրերի փոխանցման կամ դադարեցման դեպքում):


#### Սոցիալական ներդրումների ծրագրեր՝ շինարարության ժամանակահատված 2016-2018թթ

Բարելավման ոլորտ	Ծրագրերի նկարագրությունը	Ամուլսար ծրագրի ներդրում
<b>Գյուղական միջավայր</b>	Գյուղական/սոցիալական ենթակառուցվածք՝ ուղղված կյանքի ստանդարտների, որակի և պայմանների բարելավմանը:	Գյուղական միջավայրի կրթի՝ ա) ավանդական կենսամիջոցների կորստի ռիսկի նվազմանը (որը նշված է ԲՄԱԳ-ում որպես ազդեցություն) և բ) ազդակիր

 <b>GEOTEAM</b>	<b>Համայնքային զարգացման պլան</b>	<b>հունիս 2016</b>
-----------------------------------------------------------------------------------------------------	-----------------------------------	--------------------


	<p>Երկարաժամկետ ազդեցություններ կենսամիջոցների մասով՝ Արոտավայրերի կառավարում և վերահսկում, Անասնապահական ենթակառուցվածքի բարելավում</p>	<p>դրական տարածքում տնտեսական պահպանմանն ու ձևավորման: տարաբնույթ գործունեության</p>
<p><b>Տեղական ներուժի զարգացում</b></p>	<p>Ներուժի զարգացումն ու տեխնիկական աջակցությունը գյուղատնտեսական և հարակից ոլորտներում հանդիսանում է եկամտի և բարեկեցության աղբյուր հանդիսացող ավանդական կենսամիջոցների պահպանմանն ու բարելավման հիմնական գործոն: Տեղական կազմակերպությունների ստեղծում (օրինակ՝ կոոպերատիվների, ասոցիացաների և այլն): Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացմանն ուղղված տեխնիկական աջակցություն: Հմտությունների ձևավորում և մասնագիտական ուսուցում գյուղատնտեսության, անասնաբուծության և նման թեմաներով:</p>	<p>Գյուղական միջավայրի բարելավումը կբերի՝ ա) ավանդական կենսամիջոցների կորստի ռիսկի նվազմանը (որը նշված է ԲՄԱԳ-ում որպես ազդեցություն) և բ) ազդակիր տարածքում տարաբնույթ տնտեսական գործունեության պահպանմանն ու ձևավորման: Տեղական կազմակերպությունների զարգացումը կնպաստի Ընկերության և համայնքների միջև համագործակցությանը: ՓՄՁ-երը կարող են մատակարար հանդիսանակ Ծրագրի համար՝ կրճատելով Ծրագրի շահագործման ծախսերը:</p>
<p><b>Տնտեսական զարգացում</b></p>	<p>Անասնաբուծության և անասնապահության զարգացում</p>	<p>Ազդակիր համայնքներում տնտեսական աճի խթանումը</p>



 <b>GEOTEAM</b>	<b>Համայնքային զարգացման պլան</b>	<b>հունիս 2016</b>
-----------------------------------------------------------------------------------------------------	-----------------------------------	--------------------

	<p>Ֆերմերային գործը բարելավելու, կենդանիների առողջական վիճակի և կերակրման պահանջների վերաբերյալ գիտելիքներն ընդլայնելու, կաթի արտադրողականությունն ավելացնելու և գենետիկական բարելավելու նպատակով:</p> <p>Տուրիզմի զարգացում՝ ներառելով Ջերմուկի քաղաքային այգու վերանախագծումը, հիմնական հյուրանոցային ծառայությունների բարելավումը (անգլերեն և համակարգչային հմտություններ և այլն):</p>	<p>կօզնի վերահսկել տեղի մակարդակով սղաճն ու նվազեցնել հողանդական հիվանդության հնարավոր ազդեցությունը:</p>
<p><b>Կրթություն և առաջնային առողջապահություն՝ համայնքային առողջապահություն, թափոնների կառավարում, բնապահպանական իրազեկում և այլն</b></p>	<p>Իրազեկման արշավներ՝ առաջնային առողջապահություն</p> <p>Կրթության խթանում. Տեղացի ուսանողների աջակցում տեխնիկական կրթության ոլորտներում, ինչպես նաև ընդհանուր առմամբ դպրոցական կրթության որակի բարելավում: Երեխաների/երիտասարդների համար կրթական հնարավորությունների ստեղծում (արվեստ, լեզուներ, սպորտ, համակարգչային հմտություններ և այլն):</p>	<p>Տեղական համայնքներում առողջապահության բարելավումը կհանգեցնի աշխատողների առողջական վիճակի բարելավման, կստեղծի նոր առողջապահական ծառայություններ (օրինակ՝ ատամնաբուժարան), կապահովի բնակչության որոշ հատվածների բժշկական հետազոտում, օրինակ՝ կանանց և երեխաների համար և այլն:</p> <p>Կրթական վիճակի բարելավումը տեղական դպրոցներում կապահովի տեղական կադրեր Ծրագրի համար:</p>

Բոլոր ոլորտները նկարագրված են ստորև:


 <b>GEOTEAM</b>	<b>Համայնքային զարգացման պլան</b>	<b>հունիս 2016</b>
-----------------------------------------------------------------------------------------------------	-----------------------------------	--------------------

### 5.5.1 Գյուղական ենթակառուցվածքների բարելավում

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է նաև բարելավել համայնքային կյանքի որակը՝ հիմնական ծառայությունների և սոցիալական ենթակառուցվածքների ընդգրկմամբ, որոնցից են՝ թափոնների կառավարումը, ներքին ճանապարհային ցանցը, մանկապարտեզները, համայնքային կենտրոնը, առողջապահական կետերը: Սոցիալական ենթակառուցվածքի բարելավումը անչափ կարևոր է ինչպես կյանքի որակի բարելավման, այնպես էլ զարգացման նախաձեռնությունների իմաստով: Անհրաժեշտ է նաև ապահովել ծառայությունների մանրակրկիտ մշտադիտարկում՝ բացառելու համար դրանց գերձանրաբեռնման հնարավորությունը բնակիչների թվի ակնկալվող ավելացման արդյունքում: Ինչպես արդեն հաստատվել է ֆոկլուս խմբերի հետ հանդիպումների ժամանակ, երեխաների պատշաճ կրթությունն ու նորմալ գործող առողջապահական կամ մշակութային հաստատությունների առկայությունը պակաս կարևոր չեն քան զարգացման ծրագրերը: Կանայք, օրինակ, մտահոգված են երեխաների ու երիտասարդների համար պատշաճ դպրոցների, հագստի վայրերի, սպորտային և մշակութային զարգացման հնարավորությունների բացակայության փաստով: Առողջ և կրթված համայնքները ունակ են Ծրագրի շրջանակներում զբաղվածության (ուղղակի կամ անուղղակի) հնարավորություններ ապահովել տեղական համայնքների համար:

Հետևաբար ազդակիր համայնքների սոցիալական ենթակառուցվածքի բարելավումը պարտադիր պայման է, որը

- բարենպաստ պայմաններ կստեղծի կենսամիջոցների, առողջապահության և սանիտարական ծառայությունների և ընկերությունների գործունեության համար,
- կբերի ավելի շատ հյուրեր և զբոսաշրջիկներ տվյալ տարածք՝ առանց ձանրաբեռնելու տեղական համայնքային ծառայությունները, և
- Ընդլայնել համայնքի կյանքի ընկալումը բնակիչների կողմից՝ դրդելով նրանց լինել ավելի ակտիվ համայնքի անդամ,
- Տվյալ տարածքի մեկ այլ բաղադրիչ է հանդիսանում արոտավայրերի կառավարումը, անասունների արածեցման տարածքների,

 <b>GEOTEAM</b>	<b>Համայնքային զարգացման պլան</b>	<b>հունիս 2016</b>
-----------------------------------------------------------------------------------------------------	-----------------------------------	--------------------


ենթակառուցվածքների և տեխնիկական աջակցության բարելավումը՝ բոլորը երկարաժամկետ զարգացման հեռանկարով:

### **5.5.2 Տեղում առկա հնարավորությունների ընդլայնում**

Լիդիանը, դիտարկելով համայնքները որպես զարգացման գործընկերների, ձգտում է հնարավորության դեպքում ներառել հմտությունների զարգացման միջոցառումները իր ընթացիկ և հետագա համայնքային զարգացման միջոցառումներում: Ինչը նախատեսվում է անել ինչպես շահառուների մակարդակով, երբ բոլոր շահառուները մասնակցում են դասընթացների և ստանում շարունակական տեխնիկական աջակցություն, այնպես էլ համայնքի մակարդակով, երբ շահառուների խմբերի և այլ շահագրգռված համայնքի անդամների համար նոր տեխնոլոգիաների և պրակտիկ հմտությունների ցուցադրման նպատակով կազմակերպվում են ցուցադրության օրեր:

Լիդիանը՝ իր զարգացման գործընկերներից բացի, նախատեսում է նաև ուղղակիորեն համագործակցել տեղական համայնքների հետ կոնկրետ և թիրախային հմտություններ ձևավորելու և ուսուցողական դասընթացների, սեմինարների, իրազեկման արշավների և դպրոցներում կրթական միջոցառումների ձևով կրթական ու իրազեկման միջոցառումներ անցկացնելու նպատակով: Հիմնական ուսուցման ծրագիրը նախատեսված է լինելու շահագործման մեկնարկի դրությամբ տեղացիների պատրաստվածությունն ապահովելուն:

Նախատեսվում է նաև ապահովել համայնքների հետ կապի պատասխանատու կոմիտեների և համայնքի անդամների ներգրավումը բնապահպանական և սոցիալական կառավարման և վերահսկման տարբեր առաջադրանքներում: ԲՄԱԳ-ի համար տվյալների հավաքագրումը, օրինակ՝ առկա հմտությունների հաշվառման, էթնոկենսաբանական և հովիվների ուսումնասիրությունների համար, կատարվել է համայնքների անդամների կողմից ինչպես կամավոր, այնպես էլ վճարովի հիմունքներով: Վերոնշյալ միջոցառումների արդյունքում մասնակիցները ստացել են տվյալների հավաքագրման և ներկայացման զգալի փորձ: Այդ


 <b>GEOTEAM</b>	<b>Համայնքային զարգացման պլան</b>	<b>հունիս 2016</b>
-----------------------------------------------------------------------------------------------------	-----------------------------------	--------------------

սկզբունքը նախատեսվում է կիրառել համայնքների հետ հետագա համագործակցման եղանակով:

Լիդիանը նախատեսում է նաև աջակցել տեղական կառավարման մարմինների և անձնակազմի ինստիտուցիոնալ զարգացմանը, ինչն անչափ կարևոր է Ընկերության կողմից համայնքային հողերի օգտագործման դիմաց վճարվող գումարների ավելացման պարագայում: Անհրաժեշտ է ապահովել վերոնշյալի շարունակականությունը, քանի որ նոր սոցիալական և տնտեսական վիճակներն ու զարգացման ուղղությունները պահանջում են ավելի առաջընթացային և զարգացած կառավարման հմտություններ պլանավորման, վարչարարության, ֆինանսական ու մարդկային ռեսուրսների կառավարման, հաշվառման և հաշվետվողականության ապահովման ոլորտներում:

### **5.5.3 Տնտեսական զարգացում**

Լիդիանը Ամուլսարի ծրագրի շրջանակներում փորձում է խթանել տարածաշրջանի տնտեսական աճը՝ աջակցելով այստեղ առկա ավանդական արտադրություններին (ապահովելով տեխնիկական աջակցություն գյուղատնտեսության, անասնապահության, տեղական արտադրությունների՝ մասնավորապես պանրի, կաթի և այլ արտադրությունների համար): Այս տարածքը գտնվում է ոչ հանքարդյունաբերական ընկերությունների համար տեխնիկական աջակցությանն ու հնարավորությունների ընդլայնմանն ուղղված մեղմացման միջոցառումների գոտում: Կարևոր է նաև մշակել ծրագրեր, որոնք ուղղված են տեղական ռեսուրսների արդյունավետ օգտագործմանը և տնտեսական խնդիրների լուծմանը, հմտությունների ձեռքբերմանը, սարքավորումների և տեխնիկական գիտելիքների ապահովմանը, որոնցից են՝ հողի կառավարման առաջատար մեթոդների որդեգրումը և գյուղատնտեսությունում ու անասնապահությունում նոր տեխնոլոգիաների կիրառումը: Նպատակն է՝ զարգացնել ազդակիր հայանքներում առկա ներուժն ու ռեսուրսները: Որպես օրինակ կարելի է բերել Ամուլսարի ծրագրին միանալու որոշ կանանց կողմից արտահայտված պատրաստակամությունը: Նմանատիպ ծրագրերն օգնում են նաև նվազեցնել

 <b>GEOTEAM</b>	<b>Համայնքային զարգացման պլան</b>	<b>հունիս 2016</b>
-----------------------------------------------------------------------------------------------------	-----------------------------------	--------------------


գյուղատնտեսական բնագավառի անկման և ավանդական կենսամիջոցների հնարավոր կորստի ռիսկը:

Բացի այդ, Լիդիանը նախատեսում է աջակցել փոքր բիզնեսին՝ Ամուլսարի ծրագրին անհրաժեշտ որոշ մատակարարումների իրականացման եղանակով, ինչը ենթադրում է փոքր ընկերությունների համար մեկնարկային աջակցություն, տեղական արտադրության խթանում, հանքի ճամբարի համար բարձր որակի գյուղատնտեսական ապրանքների մատակարարում: Լիդիանը նախատեսում է նաև աջակցել այն տեղական ընկերություններին, որոնք կզարգացնեն առկա գյուղատնտեսական հնարավորությունները՝ ներառելով փոխադրող, պահեստավորող և վաճառքով զբաղվող ընկերությունների: Ոչ հանքարդյունաբերական ընկերությունների խթանումը կարող է օգնել համայնքներում հնարավոր սղաճային ազդեցությունները հաղթահարելու գործում:

#### **5.5.4 Կրթություն & Առաջնային առողջապահություն**

Հանրային առողջապահության իմաստով, Ծրագիրը կբարելավի տարաբնույթ առողջապահական ծառայությունների հասանելիությունը բնակչության համար՝ զարգացնելով առկա հնարավորություններն ու բարձրացնելով լայն հասարակության իրազեկվածությունը առողջ ապրելակերպի և սովորությունների վերաբերյալ: Որոշ ծրագրեր նախատեսված կլինեն կոնկրետ կանանց և երեխաների համար՝ հաշվի առնելով տարածաշրջանում դրանց (օրինակ՝ մամոգրաֆիայի և այլն) բացակայությունը կամ սակավությունը: 2012-2013թթ. առաջնային առողջապահական ծրագիրը ի հայտ բերեց այն բացթողումները, բացակայող ծառայություններն ու առողջապահությանը վերաբերող գիտելիքների պակասը, որն անհրաժեշտ է լրացնել և զարգացնել, որոնցից են օրինակ՝ առողջապահական ծառայությունների սակավությունը, բժշկության վատ վիճակն ու այլն:

Ազդակիր համայնքներում երեխաների և երիտասարդների զարգացման հնարավորությունները շատ սահմանափակ են, ինչը բազմիցս քննարկվել է ֆոկլուս խմբերի քննարկումների և համայնքների հետ հանդիպումների ժամանակ: Գեոթիմը անչափ կարևորում է երեխաների և երիտասարդների զարգացման

 <b>GEOTEAM</b>	<b>Համայնքային զարգացման պլան</b>	<b>հունիս 2016</b>
-----------------------------------------------------------------------------------------------------	-----------------------------------	--------------------

խնդիրը՝ ապահովելով սպորտի և արվեստի միջոցով առողջ ապրելակերպի քարոզումը, ստեղծելով բացակայող սպորտային ենթակառուցվածքներ և կազմակերպելով սպորտային ու մշակութային միջոցառումներ ինչպես գյուղերում, այդպես էլ համայնքների միջև:

Առաջնային առողջապահության ծրագրերից բացի, Ընկերությունը ստեղծել է Առողջության հիմնադրամ համայնքներում առկա որոշ առողջական խնդիրների լուծման նպատակով:

### **5.5.5 Մշտադիտարկում և գնահատում**

Լիդիանը կատարում է և նախատեսում է շարունակել առանձին ծրագրերի մշտադիտարկումը՝ իր կողմից իրականացվող համայնքային զարգացման ծրագրերի արդյունավետության գնահատման նպատակով: Այդ մշտադիտարկումը նախատեսվում է իրականացնել՝

- Սոցիալական զարգացման մենեջերի կողմից ղեկավարվող Լիդիանի ներքին անձնակազմի ուժերով՝ կենտրոնանալով ձեռքբերումների, համայնքի մասնակցության և ներդրումների, ազդեցության և քաղված դասերի վրա,
- Լիդիանի գործընկեր կազմակերպությունները կարող են ունենալ սեփական մշտադիտարկման և գնահատման պլաններ, այդ թվում՝ պարբերական այցելություններ տարածք, առաջընթացի և ֆինանսական հաշվետվություններ, ծրագրի գնահատման ավարտ, և
- Անկախ մշտադիտարկումը և գնահատումը կիրականացվի 4-5 տարվա կտրվածքով անկախ մարմնի կողմից՝ որակի կառավարման, ստուգման և որակի ապահովման նպատակով: Գնահատման զեկույցներում կներառվեն խորհուրդներ ծրագրի նախագծի, իրականացման մեթոդների, ազդեցությունների, ինչպես նաև ծրագրի արգասիքներից օգտվելու և դրանք զարգացնելու համայնքների հնարավորությունների վերաբերյալ:

Մշտադիտարկման մեթոդները կներառեն՝ մուտքային և ելքային ուսումնասիրություններ, հիմնական մասնակիցների հետ հարցազրույցներ, տեղական և տարածաշրջանային վիճակագրություն և համայնքային


միջոցառումների ցանկ: Որոշ դեպքերում կարող է իրականացվել համատեղ մշտադիտարկում (օրինակ՝ ենթակառուցվածքային ծրագրերի, կառավարման հնարավորություններ ստեղծող ծրագրերի դեպքում):


## 5.6 ՄԱՐԴԿԱՅԻՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

### 5.6.1 Մարդկային ռեսուրսներ

Ամուլսարի ծրագիրը նախատեսում է իրականացնել սույն ՀԶՊ իր սոցիալական թիմի ջանքերով՝ անհրաժեշտության դեպքում ներգրավելով այլ բաժիններ:

Նկար 1. Համայնքային զարգացման ծրագրերն իրականացնող թիմի օրգանոգրամա



 <b>GEOTEAM</b>	<b>Համայնքային զարգացման պլան</b>	<b>հունիս 2016</b>
-----------------------------------------------------------------------------------------------------	-----------------------------------	--------------------

Վերոնշյալ օրգանոգրաման արտացոլում է Ծրագրի կադրային ռազմավարությունը համայնքային զարգացման ծրագրերի և դրանց վերահսկման մասով:

## **6 ՀԱՋՈՐԴ ՔԱՅԼԵՐԸ**

Սույն Համայնքային զարգացման պլանը բխում է Ծրագրի այս փուլում բացահայտված կարիքներից և կարող է վերածվել երկարաժամկետ ուղեցույցի և պլանի: Հիմնարար սկզբունքը կայանում է նրանում, որ ապահովվի համայնքի հնարավորինս ակտիվ ներգրավվածություն կարիքների սահմանման և ծրագրերի նախագծման, մասնակցության և վերահսկման գործընթացներում:

## **7 ԱՐՏՈՆՈՒՄ**

Հաստատվել է \_\_\_\_\_

Կայունության գծով փոխնախագահ

Ամսաթիվ՝